




ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ-ՈՒՄ ՎԵՃԵՐԻ  
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ  
ԼՈՒԾՄԱՆ ՈԼՈՐՏԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ՈՒՄ  
ՎԵՃԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ  
ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Երևան 2020



Ուսումնասիրությունը հայերեն հրատարակություն է, որը կատարել է «Յեւ-սինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ իրականացվող «Աջակցություն դատաիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակում: Ուսումնասիրության բովանդակությունը և արտահայտված տեսակետները միմիայն «Յեւ-սինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպությանն են և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպության տեսակետներին:



ՀՀ-ում վեճերի այլընտրանքային լուծման ոլորտի վերաբերյալ հետազոտություն  
*Հետազոտության հեղինակներ՝ Ա. Խզմայան, Յ. Մալխասյան, Յ. Մովսեսյան*

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, 106 էջ



Սույն հրատարակությունը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի՝ **«Քաղաքացիական հասարակություն» (ԶՀ)** թեմայով: Շարքն ընդգրկում է գրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.



**Քննադատական մտածողություն (ԶՄ)**



**Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)**



**Քաղաքացիական հասարակություն (ԶՀ)**




**Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)**

# ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	<b>7</b>	
<b>ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>11</b>	
<b>ԳԼՈՒԽ 1</b>	<b>ԶՂ-ՈՒՄ ՎԵՃԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌԻ ԽՆԴԻՐՆԵՐ</b>	<b>14</b>
<b>1.1. ԱՐԲԻՏՐԱԺ</b>	<b>15</b>	
1.1.1.	Գործարքների անվավերության հիմնա հարցը դատական պրակտիկայում	15
1.1.2.	Կատարողական թերթի տրամադրման հիմնախնդիրը	20
1.1.3.	Կորպորատիվ վեճերի քննությունը արբիտրաժում	21
1.1.4.	Դատարանի կողմից գործի քննությունը արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում	23
1.1.5.	Շահերի բախման հստակ կարգավորման անհրաժեշտությունը	24
1.1.6.	Արբիտրաժի մասին օրենքում «անգործունակություն» եզրույթը	25
1.1.7.	Արբիտրաժի մասին օրենքում «առոչնչություն» եզրույթ	25
1.1.8.	Արբիտրաժի վճռի ըստ էության վերանայման հիմնախնդիրը	26
1.1.9.	Կատարողական թերթի տրամադրման վարույթի կասեցման հիմնահարցը	27

<b>1.2. ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>29</b>
1.2.1. Կատարողական թերթի հիմնախնդիր	29
1.2.2. Հաշտարարների ռեեստրի վարման հիմնախնդիրը	31
1.2.3. Հաշտարարների նշանակման ընթացակարգը	33
1.2.4. Հաշտարարների որակավորում և արտոնագրում	36
1.2.5. Հաշտարարների վերապատրաստում	38
1.2.6. Հաշտարարի վարքագծի և հաշտարարության կանոնների բացակայությունը	39
1.2.7. Օտարերկրյա պետություններում կնքված հաշտության համաձայնությունների կիրառում	40
1.2.8. Դատարանների կողմից վեճի կողմերի ուղղորդումը հաշտարարության	40
1.2.9. Հաշտարարների ինքնակառավարվող կազմակերպության (ան)արդյունավետության հարցը	41
<b>1.3. ԱՆՎՃԱՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ</b>	<b>44</b>
<i>Անվճար հաշտարարության խնդիրը</i>	44
<i>Պարտադիր հաշտարարության ներդրման հնարավորությունը</i>	45
<b>ԳԼՈՒԽ 2 ԿԵՃԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ</b>	<b>50</b>
<b>2.1. ԱՐԲԻՏՐԱԺ</b>	<b>51</b>

<b>2.1.1. Արբիտրաժի զարգացման խոչընդոտներ</b>	<b>52</b>
<i>Իրազեկվածության պակաս</i>	52
<i>Չամսկարգային և կազմակերպական խնդիրներ</i>	53
<i>Վստահության պակաս</i>	54
<i>Մրցակցության խնդիրներ</i>	55
<b>2.1.2. Իրազեկվածության մեծացման, վստահության բարձրացման և զարգացման ուղիներ</b>	<b>56</b>
<b>2.1.3. Նոր արբիտրաժային հաստատության անհրաժեշտություն, առկա հաստատությունների բարելավումը</b>	<b>60</b>
<b>2.2. ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>65</b>
<b>2.2.1. Հաշտարարության ոլորտի գործնական խնդիրները</b>	<b>66</b>
<i>Իրազեկվածության պակաս</i>	66
<i>Վստահության խնդիրներ</i>	68
<i>Դատական աջակցության պակաս</i>	69
<i>Այլ խնդիրներ</i>	71
<b>2.2.2. Իրազեկվածության մեծացմանը, վստահության բարձրացմանն ու հաշտարարության զարգացմանն ուղղված առաջարկներ</b>	<b>72</b>
<b>ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ</b>	<b>76</b>
<b>ԱՐԲԻՏՐԱԺ</b>	<b>78</b>
<b>ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</b>	<b>83</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1</b>	<b>89</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2</b>	<b>93</b>
<b>ABSTRACT</b>	<b>99</b>



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չայաստանի Չանրապետությունում վեճերի այլընտրանքային լուծման (ՎԱԼ) առկա մեխանիզմները համեմատաբար կարճ պատմություն ունեն: Արբիտրաժի համակարգը ներդրվել է 2006 թ., երբ ընդունվեց «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՕ-55-Ն օրենքը (այսուհետ՝ Արբիտրաժի մասին օրենք), որով նախկինում գործող միջնորդ դատարանների համակարգը<sup>1</sup> փոխարինվեց առևտրային արբիտրաժի համակարգով:

Արբիտրաժի մասին օրենքը հիմնված է UNCITRAL միջազգային արբիտրաժի մասին մոդելային օրենքի վրա, և ըստ այդմ Չայաստանի Չանրապետությունը համարվում է UNCITRAL միջազգային արբիտրաժի մասին մոդելային օրենքի երկիր<sup>2</sup>: Չայաստանի Չանրապետությունը 1998-ից «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» 1958 թ. Նյու Յորքի կոնվենցիայի (այսուհետև՝ Նյու Յորքի կոնվենցիա) անդամ է:

---

1. Տե՛ս «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» Չայաստանի Չանրապետության 1998 թ. մայիսի 5-ի ՀՕ-219 օրենքը:

2. Տե՛ս UNCITRAL միջազգային արբիտրաժի մասին օրենքը այստեղ. [https://uncitral.un.org/en/texts/arbitration/modellaw/commercial\\_arbitration/status](https://uncitral.un.org/en/texts/arbitration/modellaw/commercial_arbitration/status)



Ներկայումս Արբիտրաժի մասին օրենքն ու ընդհանուր օրենսդրական դաշտը հիմնականում համապատասխանեցված են այս երկու միջազգային փաստաթղթերի պահանջներին: Այնուամենայնիվ, չնայած օրենսդրական կարգավորումներին, Հայաստանում արբիտրաժը բավարար զարգացած չէ, և վեճերը հազվադեպ են հանձնվում արբիտրաժի քննությանը: Բացի դրանից՝ ՀՀ օրենսդրությունում և դատարանների իրավակիրառ պրակտիկայում շարունակում են արդիական մնալ որոշ հիմնահարցեր, որոնք մանրամասն կքննարկվեն ստորև:

Հայաստանում իրավաբանները հիմնականում ձեռնպահ են մնում արբիտրաժը որպես վեճի լուծման միջոց իրենց հաճախորդներին խորհուրդ տալուց: Սակայն որոշ չափով հուսադրող է, որ իրավաբանները արբիտրաժը ընտրում են որպես ՎՃԼ մեխանիզմ հատկապես բարդ, ֆինանսական կամ շինարարական մեծ պայմանագրերով, միջազգային տարր ունեցող գործերով: Ընդհանուր առմամբ իրավաբանները որպես արբիտրաժի առավելություններ դիտարկում են գաղտնիությունը, դրա վճիռների ճանաչումն ու կատարումն այլ երկրի տարածքում: Արբիտրաժ ընտրելիս իրավաբանները հիմնականում ուշադրություն են դարձնում ծախսերին, արբիտրաժի երկրում օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարենպաստությանը (արբիտրաժի մասով), պրոֆեսիոնալ և ճանաչված արբիտրների ցանկի առկայությանը, պրոֆեսիոնալիզմին:

Հայաստանում վեճերը արբիտրաժ հանձնելու դեպքերը չափազանց քիչ են: Այս առումով որոշ չափով բացառություն է Հայաստանի բանկերի միության ֆինանսական արբիտրաժը, սակայն այն մասնագիտացած է ֆինանսական կազմակերպությունների՝ իրենց հաճախորդների դեմ պահանջների վրա (հիմնականում գումարի բռնագանձման գործեր/collection) որոնց տեխնիկական ու նեղ բնույթը թույլ չի տալիս խոսել արբիտրաժի պրակտիկայի ընդհանուր զարգացման մասին և չի կարող հիմք դառնալ երկրում արբիտրաժի ընդհանուր զարգացման համար: Հաշտարարության համակարգը առաջին


անգամ ներդրվել է ՀՀ-ում 2015 թ., երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ներառվեցին արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարության վերաբերյալ կարգավորումներ: Հաշտարարության հետ կապված հարաբերությունները առավել մանրամասն կարգավորվեցին 2018 թ. ընդունված «Հաշտարարության մասին» ՀՕ-351-Ն օրենքով (այսուհետ՝ Հաշտարարության մասին օրենք): Բացի դրանից՝ ՀՀ-ն 26.09.2019 թ. ստորագրել է (բայց դեռ չի վավերացրել) «Մեդիացիայի արդյունք հանդիսացող՝ վեճերի կարգավորման վերաբերյալ միջազգային համաձայնագրերի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան, թեև այդ կոնվենցիայի կարգավորումները վերաբերում են միայն մեկ այլ պետությունում կատարված մեդիացիայի (հաշտարարության) արդյունքում կնքված համաձայնություններին:

Հաշտարարության ոլորտում խնդիրներն ընդհանուր առմամբ ավելի շատ են, քան արբիտրաժի ոլորտում. դրանք ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական բնույթի են:

Ներկայումս զգալի խնդիրներ կան՝ կապված արտոնագրված և փաստացի գործող հաշտարարների հետ: Մասնավորապես արտոնագրված ավելի քան 50 հաշտարարից փաստացի գործունեություն է ծավալում մոտ 25-30-ը, այն էլ՝ ոչ որպես իրենց գործունեության հիմնական ուղղություն: Հաշտարարների քանակի խնդիրն առավել սուր է մարզերում: Այս առումով անհրաժեշտ են հետևողական քայլեր նաև մարզերում հաշտարարների առկայությունը ապահովելու համար: Ներկայումս, ըստ ստացված տեղեկությունների, հաշտարարներ առկա են Գյումրիում և Դիլիջանում, մինչդեռ այլ մարզերի մասով տեղեկատվությունը բացակայում է:



ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



Սույն ուսումնասիրությունն իրականացվել է երկու փուլով՝ օրենսդրական և իրավական դաշտի ուսումնասիրություն և գործնական քննարկումների, հարցումների անցկացում ու հարցումների տվյալների մշակում: Վերջնական ուսումնասիրությունն ամփոփում է երկու փուլերի արդյունքները և ներկայացնում է ինչպես հարցված անձանց բարձրացրած, այնպես էլ հեղինակների հայտնաբերած խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր եղանակներն ու միջոցները: Այսպիսով՝ առաջին փուլում կատարվել է ՀՀ օրենսդրության, մասնավորապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի, «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի, դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի, ինչպես նաև միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» 1958 թ. կոնվենցիայի, «Մեդիացիայի արդյունք հանդիսացող՝ վեճերի կարգավորման վերաբերյալ միջազգային համաձայնագրերի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի, վերլուծական զեկույցների, գիտական հոդվածների ուսումնասիրություն:

Փաստաթղթային ուսումնասիրությանը հաջորդել է ոլորտի տարբեր ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույց-

ների և հարցումների փուլը, որին ներգրավվել են կազմակերպությունների (այդ թվում՝ խոշոր ֆինանսական կառույցների՝ բանկերի և վարկային կազմակերպությունների) իրավաբաններ Չավելված 1-ում բերված գրավոր հարցաշարի միջոցով, իրականացվել են նաև բանավոր քննարկումներ ՉՉ-ում արտոնագրված և փաստացի հաշտարարությամբ զբաղվող հաշտարարների, ՉՉ առևտրաարդյունաբերական պալատին կից արբիտրաժային դատարանում ցուցակագրված արբիտրների, ՉՉ պետական մարմինների, դատարանների, բարձրագույն դատական խորհրդի ներկայացուցիչների, ինչպես նաև ոլորտային փորձագետների հետ (ինչպես ՉՉ-ում, այնպես էլ ՉՉ-ի սահմաններից դուրս գործունեություն ծավալող) Չավելված 2-ում բերված հարցաշարի կիրառմամբ:

Չարցագրույցների շրջանակում քննարկվել և վերստուգվել են փաստաթղթային ուսումնասիրության արդյունքները և բացահայտված խնդիրները, վերհանվել են այլ գործնական խնդիրներ, որոնք հետագայում դարձել են քննարկման առարկա նաև այլ հարցվածների հետ հանդիպումների և քննարկումների ընթացքում: Արժարժված հարցերը զեկույցի կազմման բոլոր փուլերում քննարկվել են միջազգային փորձագետի հետ:



ԳԼՈՒԽ 1

ՀՀ-ՈՒՄ ՎԵՃԵՐԻ  
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ  
ՈԼՈՐՏՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ԽՆԴԻՐՆԵՐ



## 1.1. ԱՐՔԻՏՐԱԺ

ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արբիտրաժի ոլորտում օրենսդրական դաշտը համապատասխանեցված է ՀՀ միջազգային պայմանագրերին և հիմնականում համահունչ է այս ոլորտում միջազգային լավագույն փորձին:

Հարցված մասնագետների մեծ մասը նույնպես հակված է այն տեսակետին, որ Հայաստանում արբիտրաժի զարգացման հետ կապված խնդիրները պայմանավորված են ոչ այնքան օրենսդրական, որքան գործնական խնդիրներով: Այնուամենայնիվ, որոշ օրենսդրական բացեր ու իրավակիրառ պրակտիկայի խնդիրներ շարունակում են պահպանվել՝ խոչընդոտելով Հայաստանում արբիտրաժի զարգացումը:

Ստորև հեղինակներն առանձնացրել են այն հիմնական խնդիրները, որոնք վերհանվել են իրականացված հարցումների և հետազոտությունների արդյունքում:

### 1.1.1. **Գործարքների անվավերության հիմնահարցը դատական պրակտիկայում**

Թերևս առավել էական խնդիրը վերաբերում է արբիտրաժային համաձայնություն պարունակող պայմանագրերի վավերության

վիճարկման (դրանք անվավեր ճանաչելու պահանջների քննության) հարցում ՀՀ դատարանների որդեգրած մոտեցմանը:

Այն հարցը, թե արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ վեճը արդյոք ենթակա է արբիտրաժի քննությանը, քննարկվել է դեռևս ԵԿԴ/1910/02/13 քաղաքացիական գործով: Նշված գործի շրջանակում Վճռաբեկ դատարանը 18.07.2014 թ. որոշմամբ արտահայտած դիրքորոշմամբ եզրակացրել էր, որ գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջների քննությունը վերապահված է բացառապես դատարանին: Այդ եզրահանգման համար հիմք էին հանդիսացել իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության Սահմանադրական և ՄԻԵԿ 13-րդ հոդվածով սահմանված երաշխիքները, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի դրույթը, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը:

Նման մեկնաբանությունը գործնականում հանգեցրեց արբիտրաժային տրիբունալի կողմից գործարքի անվավերության վերաբերյալ պահանջների քննության անհնարինության, ինչն իր հերթին կարող էր բացասաբար անդրադառնալ արբիտրաժի՝ որպես վեճի լուծման մեխանիզմի գրավչությանը, քանզի կողմերը չէին ունենա վստահություն, որ արբիտրաժային համաձայնությունը թույլ կտար խուսափել դատարաններում գործի ըստ էության քննությունից: Այս մոտեցման պայմաններում յուրաքանչյուր կողմ փաստացի հնարավորություն կստանար խուսափելու արբիտրաժից ու վեճի լուծումը տեղափոխելու դատարան՝ պարզապես ներկայացնելով վեճի հիմքում ընկած գործարքի (պայմանագրի) անվավերության վերաբերյալ պահանջ:

Այս խնդրի լուծման նպատակով 19.06.2015 թ. ընդունված «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացում



կատարելու մասին» ՀՕ-74-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետը փոխվեց՝ սահմանելով, որ Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը իրականացնում է ոչ միայն դատարանը, այլև արբիտրաժային տրիբունալը, որոնք տեքստում այնուհետև միասին պետք է կոչվեին «դատարան» («այսուհետ՝ դատարան»):

Օրենքի նախագծի հիմնավորման համաձայն՝ թեև ՎԿԼ զարգացումն առաջնահերթություն է, սակայն «...ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի գործող կարգավորումները դատական պրակտիկայի զարգացումներն այլ ուղղությամբ են տարել՝ սահմանափակելով մի շարք իրավահարաբերություններից ծագած վեճեր առևտրային արբիտրաժի միջոցով լուծելու հնարավորությունը (տե՛ս, օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թ. թիվ ԵԿԴ/1910/02/13 քաղաքացիական գործով որոշումը): Խնդիրը մասնավորապես այն է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գործող խմբագրության 12-րդ հոդվածի մեկնաբանությունից է միայն անուղղակի պարզ դառնում, որ արբիտրաժային տրիբունալը ևս սույն օրենսգրքի իմաստով դիտվում է դատարան, սակայն հենց այստեղից էլ գալիս է անորոշությունը, քանի որ նախ անհասկանալի է, թե խոսքը միայն սույն հոդվածի իմաստով արբիտրաժային տրիբունալի՝ դատարանին հավասարեցնելուն է վերաբերում, առավել ևս, որ սույն հոդվածն ուղղված է կարգավորելու նախ և առաջ քաղաքացիական իրավունքներն իրականացնելու սահմանները, թե նույն քաղաքացիական իրավունքների պաշտպանություն իրականացնելու միջոցների իմաստով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մաս) ևս արբիտրաժային տրիբունալը կարող է դիտվել դատարան»<sup>3</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ օրենսդիրը ուղղակիորեն վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի վերագրյալ դիրքորոշումը

---

3. Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը այստեղ.  
<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=7563&Reading=0>

(գործարքի անվավերության վերաբերյալ վեճը բացառապես դատարանի քննության ենթակա լինելու վերաբերյալ) և շեշտել այդ դիրքորոշման համար հիմք հանդիսացած օրենքի դրույթը փոխելու իր նպատակը, դատական պրակտիկան շարունակում է հետևել նախկին դիրքորոշմանը: Մասնավորապես ԿԴ2/0548/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.04.2019 թ. որոշմամբ շեշտվել է, որ «*օրենսդրական վկայակոչված փոփոխությունները կատարվել են իրավական նորմը հստակեցնելու նկատառումով, ինչը չի ենթադրում, որ իրավունքների պաշտպանության բոլոր եղանակները այդ փոփոխությամբ վերապահվել են նաև առևտրային արբիտրաժին...: ...Հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի հիմնական և կարևորագույն լիազորություններից մեկը՝ օրենքի մեկնաբանությունը և օրենքի միատեսակ կիրառության ապահովումը՝ **Վերաքննիչ դատարանը փաստում է, որ այդ որոշմամբ Վճռաբեկ դատարանը բացահայտել է, բացի դատական պաշտպանության ձևից, նաև իրավունքի պաշտպանության այլ ձևերի կիրառման հնարավորությունը, իսկ առանձին բարդություն և կարևորություն ունեցող գործերով առաջացող վեճերի լուծումը պայմանավորել է միայն դատական պաշտպանությամբ ոչ թե այն հիմնավորմամբ, որ այդ պահին գործող խմբագրությամբ օրենքը բացառում է իրավունքների պաշտպանության այլ ձևերին դիմելը, այլ հիմքում դրվել է դատական պաշտպանության ձևի արդյունավետությունը, նմանատիպ պահանջներով գործերի բացառիկությունը, հանրային հատուկ նշանակությունը**»:*

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի այսպիսի դիրքորոշումը փաստացի ենթադրում է, որ չնայած օրենսդրական վերոգրյալ փոփոխություններին՝ արբիտրաժային համաձայնություն պարունակող պայմանագրով կողմերը ամեն դեպքում կարող են դիմել դատարան գործարքի անվավերության վերաբերյալ պահանջով: Այսինքն՝ դատական պրակտիկայում ակնհայտորեն չլուծված է մնում գործարքի անվավերության վերաբերյալ վեճի քննությունը արբիտրաժում իրականացնելու հնարավորությունը:

Արդյունքում դատարանը անտեսում է արբիտրաժային համաձայնության (վերապահման)՝ գործարքի այլ դրույթներից անկախ և առանձին լինելու սկզբունքը<sup>4</sup> այն դեպքերում, երբ քննարկվում է գործարքի անվավերությունը (separability doctrine):

Հատկանշական է նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակ ընդունել է արբիտրաժային համաձայնությունների վավերությունը և հաստատել, որ դրանք ընդհանուր առմամբ համատեղելի են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի հետ<sup>5</sup>: Եվրոպական դատարանը նաև հստակ նշել է, որ ազատ տրված համաձայնությունը՝ վեճը լուծել արբիտրաժի միջոցով, անձին իրավաչափորեն է զրկում դատարան դիմելու իրավունքից, որն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով<sup>6</sup>:

Քննարկվող հարցը որպես առաջնահերթ խնդիր են նշել նաև մի շարք հարցված փորձագետներ:

**Հետևապես անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով հստակ ամրագրել, որ արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում գործարքի անվավերության հարցը, ի թիվս այլոց, կարող է քննել նաև արբիտրաժային տրիբունալը:**

---

4. Ամրագրված է նաև Արբիտրաժի մասին օրենքի 16-րդ հ. 1-ին մասում:

5. Տե՛ս, օրինակ՝ *Deweert v. Belgium*, ECtHR judgment of 27 February 1980, Series A, No. 35, § 49, տե՛ս նաև՝ *Suda c. République tchèque*, no 1643/06, § 48, 28 octobre 2010; *Tabbane c. Suisse*, *Décision du 01.03.2016*; *app. N. 41069/12*, § 25:

6. *Pastore v. Italy*, *Decision by Court (second section) of 25 May 1999*, case N 46483/99.

### 1.1.2. Կատարողական թերթի տրամադրման հիմնախնդիրը

Ներկայումս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, արբիտրաժի վճիռների հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումները, որոնց համար արբիտրաժի վայր է եղել ՀՀ-ն, քննվում են մեկ ամսվա ընթացքում (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հ. 323): Այս ժամկետի հետ կապված գործնականում առաջանում են խնդիրներ, և դատարանների ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ այն չի պահպանվում:

Նշված խնդրի վերաբերյալ մտահոգություններ են հայտնում առավելապես ֆինանսաբանկային ոլորտի ներկայացուցիչները: Այս առումով հարկ է հաշվի առնել, որ նշված ոլորտում գերակշռում են ոչ մեծ գումարների բռնագանձման պահանջները, որոնցով գործող օրենսդրությամբ դատարանները, որպես կանոն, կիրառում են պարզեցված վարույթ, որը չի պահանջում ներկայանալ դատական նիստերին և ապահովում է գործի արագ քննություն, իսկ վերաքննիչ բողոքի ներկայացման հավանականությունը նման վեճերով ցածր է: Այս պարագայում կատարողական թերթ ստանալու հետ կապված ժամկետների խնդիրը գործնականում վերացնում է արբիտրաժի՝ որպես վեճի արագ քննության միջոց լինելու առավելությունը:

Այս առնչությամբ առաջարկություններ են հնչել արբիտրաժային տրիբունալին վերապահել կատարողական թերթ տալու լիազորություն: Թեպետ արբիտրաժային տրիբունալի կողմից կատարողական թերթի տրամադրման հետ կապված որոշ հիմնախնդիրներ հնարավոր է մեղմել՝ կատարողական թերթի տրամադրումը վեճը քննող արբիտր(ներ)ից տարբերվող արբիտրին վերապահելով, սակայն նույնիսկ այս պարագայում **կատարողական թերթի տրամադրման գործառույթի պատվիրակումը արբիտրաժային տրիբունալին խնդրահարույց է**, քանի որ այն մաս է կազմում հարկադիր կատար-

ման (enforcement)՝ ավանդաբար պետական գործառույթի: Միջազգային փորձագետը նույնպես բացասական դիրքորոշում է հայտնել նման հնարավոր լուծման առնչությամբ՝ նշելով, որ միջազգային պրակտիկայում ընդունված չէ նման մոտեցում, և կատարողական թերթերը տրամադրում են դատարանները:

Միաժամանակ, բարձրացված խնդիրը պահանջում է լուծում, որը կարող է ապահովվել դատավորների վերապատրաստման և/կամ արբիտրաժի հետ կապված գործերով մասնագիտացված դատավորների միջոցով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հարցը առնչվում է նաև դատարանների ընդհանուր արդյունավետության հիմնախնդրին, այն առավել մանրամասն քննարկվում է ստորև:

### **1.1.3. Կորպորատիվ վեճերի քննությունը արբիտրաժում**

ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչների կողմից կարծիք է հայտնվել առ այն, որ անհրաժեշտ է ուսումնասիրել կորպորատիվ վեճերը արբիտրաժի լուծմանը հանձնելու հնարավորությունը՝ դրանով իսկ ընդլայնելով արբիտրաժի ենթակա վեճերի շրջանակը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման պրակտիկա առկա է մասնավորապես եվրոպական երկրների զգալի մասում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում 2018 թ. հստակ սահմանվել է բաժնետիրական համաձայնագիր կնքելու հնարավորությունը, և այդպիսի համաձայնագրի կողմերի համար վեճերը արբիտրաժին հանձնելու հնարավորությունը կարող է շահավետ լինել: Բացի դրանից՝ նման դեպքերում, որպես կանոն, համաձայնագրի կողմերը օգտվում են իրավաբանների ծառայություններից և համեմատաբար լավ են իրազեկված իրենց իրավունքների մասին, ինչը մեծացնում

Է հավանականությունը, որ իրենք կդիտարկեն վեճերն արբիտրաժին հանձնելու հնարավորությունը:

Այս առումով որոշ մտահոգություններ են հնչել այն փաստի առնչությամբ, որ կորպորատիվ վեճերը հաճախ կարող են ազդել երրորդ անձի իրավունքների վրա (օրինակ՝ իրավաբանական անձի կառավարման մարմնի որոշման բողոքարկումը կարող է ազդել այդ որոշմամբ հաստատված գործարք կնքած երրորդ կողմի իրավունքների վրա): Սակայն, ընդհանուր սկզբունքի համաձայն, արբիտրաժի վճիռը կարող է իրավական հետևանքներ առաջացնել բացառապես արբիտրաժային համաձայնության կողմերի համար (*inter partes*): Հետևաբար գործնականում արբիտրաժային տրիբունալի կողմից վեճի քննությունը կարող է հնարավոր լինել բացառապես, երբ առկա է այն բոլոր անձանց համաձայնությունը, որոնց իրավունքների վրա կարող է ազդել արբիտրաժային տրիբունալի վճիռը: Ուստի նման խնդրահարույց դեպքերում արբիտրաժային տրիբունալը վեճը քննության չի առնի առանց համապատասխան երրորդ անձի համաձայնության, իսկ եթե տրիբունալը վեճը քննության առնի առանց երրորդ անձի մասնակցության, արբիտրաժի վճիռը, նման անձանց իրավունքների վրա ազդող մասով, դատարանի կողմից ենթակա կլինի չեղյալ ճանաչման Արբիտրաժի մասին օրենքի ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն:

**Ուստի նպատակահարմար է դիտարկել կորպորատիվ վեճերը արբիտրաժի միջոցով լուծելու (Արբիտրաժի մասին օրենքում «առևտրային» եզրույթի ներքո դրանք ներառելու) հնարավորությունը (բացառությամբ այն վեճերի, որոնցով պահանջի առարկա է իրավաբանական անձի վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ կորպորատիվ որոշումների ընդունումը կամ վիճարկումը)՝ հաշվի առնելով նաև այդ մասով առաջադեմ իրավակարգերում առկա միտումները:**

#### 1.1.4. Դատարանի կողմից գործի քննությունը արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում

Գործող իրավակարգավորումների համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը հղում է կատարում տվյալ վեճը արբիտրաժի քննությանը հանձնելու՝ կողմերի միջև առկա արբիտրաժային համաձայնությանը, և այդպիսի համաձայնության հիման վրա արբիտրաժ դիմելու հնարավորությունը չի վերացել<sup>7</sup>: Հետևաբար արբիտրաժային համաձայնության առկայությունն ինքնին չի բացառում դատարանի կողմից գործի քննությունը, քանի դեռ պատասխանողը չի առարկում դրա դեմ: Ընդ որում՝ արբիտրաժային համաձայնության առկայությունն առհասարակ հիմք չէ հայցը վերադարձնելու համար:

Այս առնչությամբ որոշ հարցվածներ առաջարկել են վերանայել այս կարգավորումը՝ փոխարենը սահմանելով, որ պայմանագրում արբիտրաժային համաձայնության առկայությունը ինքնին կդառնա հայցադիմումը վարույթ չընդունելու հիմք: Առաջարկի հիմքում այն գաղափարն է, որ որոշ դեպքերում կարելի է նախատեսել պարտադիր արբիտրաժ (առանց դատարան դիմելու հնարավորության, եթե կա արբիտրաժային համաձայնություն) այն պարագայում, երբ ցանկանում ենք խրախուսել և զարգացնել արբիտրաժը ՀՀ-ում, հատկապես ֆինանսական հաստատությունների կողմից դրանց կիրառումը որպես հիմնական ՎԱԼ մեխանիզմ: Կարծիք է հայտնվել նաև, որ նման մոտեցումը կարող է բարձրացնել արբիտրաժի նկատմամբ վստահությունը, քանի որ երբ որևէ բան դառնում է պարտադիր, կա երկրորդական ընկալում, որ այն վստահելի է, հուսալի է, այլապես պետությունը այն պարտադիր չէր դարձնի:

---

7. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հ. 180:

Չեղիևակները հակված չեն ընդունելու այս առաջարկը, քանի որ արբիտրաժային համաձայնությունը հիմնված է կողմերի ազատ կամարտահայտման վրա, ու կողմերը կարող են ցանկացած պահի հրաժարվել դրա կիրառումից: Նման մոտեցումը չի բխում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված տնօրինչականության սկզբունքից: Ուստի դատարանում գործի քննությունը չպետք է բացառվի սոսկ արբիտրաժային համաձայնության առկայության հիմքով, քանի դեռ վեճի կողմերից որևէ մեկը չի պնդում վեճը արբիտրաժ հանձնելու իր իրավունքը:

#### 1.1.5. Շահերի բախման հստակ կարգավորման անհրաժեշտությունը

Ըստ որոշ հարցվածների՝ Հայաստանում մեծ խնդիր է արբիտրների շահերի բախման բացահայտման մեխանիզմների, չափանիշների և ուղեցույցների բացակայությունը: Թեև, օրենքի համաձայն, յուրաքանչյուր հաստատություն պետք է ունենա արբիտրների վարքագծի իր կանոնները, այդուհանդերձ, ՀՀ-ի նման փոքր շուկայում, որտեղ մեծ է հավանականությունը, որ գործը քննող արբիտրը և կողմի ներկայացուցիչը կունենան շահերի բախում, անհրաժեշտ են ավելի խիստ և օրենսդրական մակարդակի լուծումներ: Քիչ չեն դեպքերը, երբ արբիտրաժային հաստատության ղեկավարը, նույն հաստատության արբիտրների ցանկում ներառված արբիտրների մեծ մասը և արբիտրաժին դիմող կողմերի ներկայացուցիչները աշխատում են նույն իրավաբանական գրասենյակում:

Այս առնչությամբ անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել **գործող արբիտրաժային հաստատություններում և *ad hoc* արբիտրաժի դեպքում շահերի բախման կանոնակարգերի ներդրման պահանջ՝ դրանց բովանդակության մասով որպես լավագույն փորձ հիմք ընդունելով Փաստաբանների միջազգային ասոցիացիայի շահերի բախման վերաբերյալ ուղեցույցը (IBA Guidelines on Conflict of Interest):**



### **1.1.6. Արբիտրաժի մասին օրենքում «անգործունակություն» եզրույթը**

Հարցվածներից ոմանց կարծիքով Արբիտրաժի մասին օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետում «անգործունակություն» եզրույթի օգտագործումը (որպես արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման մերժման հիմք) հետևանք է Նյու Յորքի կոնվենցիայի 5-րդ բաժնի սխալ թարգմանության: Կոնվենցիան այս առաջնությունը կիրառում է «the parties ... were, under the law applicable to them, under some incapacity...» եզրույթը, որը, ի տարբերություն «անգործունակություն» եզրույթի (որը վերաբերում է միայն ֆիզիկական անձանց՝ գործարքի կնքման համար կամարտահայտությունը), վերաբերում է նաև իրավաբանական անձանց, որոնք, կիրառելի օրենսդրության համաձայն, չունեն իրավունակություն (օրինակ՝ իրավաբանական անձը համապատասխան պահին գրանցված չէր, դրա գրանցումը դադարեցված էր կամ կասեցված էր), կամ որոնց անունից համաձայնությունը ստորագրվել է նման իրավասություն չունեցող անձի կողմից:

Համապատասխանաբար **անհրաժեշտ է Արբիտրաժի մասին օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետում «անգործունակ» բառից հետո լրացնել «կամ չի ունեցել արբիտրաժային համաձայնությունը կնքելու իրավասություն» բառերը:**

### **1.1.7. Արբիտրաժի մասին օրենքում «առոչնչություն» եզրույթը**

Արբիտրաժի մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի առոչնչ լինելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը ինքնին կամ օրենքի ուժով չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության: Նշված դրույթը փաստացի անդրադառնում է միայն անվավե-

րության երկու հնարավոր տեսակներից մեկին՝ առոչնչությանը, մինչդեռ այն պետք է վերաբերեր գործարքի անվավերությանն առհասարակ:

**Համապատասխանաբար անհրաժեշտ է Արբիտրաժի մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «առոչինչ» եզրույթը նշված հոդվածում փոխարինել «անվավեր» եզրույթով:**

### **1.1.8. Արբիտրաժի վճռի ըստ եռության վերանայման հիմնախնդիրը**

Հարցված փորձագետներից մեկը մտահոգություն հայտնեց, որ չնայած, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 319-րդ հոդվածի համաձայն, արբիտրաժի վճիռը դատարանը կարող է չեղյալ ճանաչել բացառապես Արբիտրաժի մասին օրենքով սահմանված հիմքերով, սակայն գործնականում դատարանները հակված են ավելի լայն շրջանակով քննելու գործը՝ փաստացի որոշ չափով վերաքննելով արբիտրաժի որոշումը: Թեև փորձագետը չներկայացրեց ավելի մանրամասն տվյալներ խնդրի եռության վերաբերյալ, սակայն հեղինակների կարծիքով այս մտահոգությունը կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ ու 4-րդ մասերի համաձայն, դատարանը կարող է դիմումի քննության ընթացքում պարզաբանումներ ստանալու համար հրավիրել դատական նիստ, պահանջել վերաբերելի փաստաթղթեր: Տեսականորեն առկա է ռիսկ, որ դատարանները կարող են այս նորմերի կիրառմամբ սկսել գործի նյութական տեսանկյունից վերանայումը՝ անհիմն լայնացնելով իրենց կողմից քննության ենթակա հարցերի շրջանակը: Սա կարող է իր հերթին բացասական ազդեցություն ունենալ ՀՀ-ի՝ որպես արոարբիտրաժային իրավակարգ հանդիսանալու վրա: Բացի դրանից՝ այն փաստը, որ նիստ հրավիրելու մասին որոշում կայացնելու դեպքում դիմումի քննության ժամկետը ենթակա է երկարաձգման (1 ամսից դառնալով 2 ամիս), նշանակում է,

որ այս նորմերը կարող են դատարանի կողմից կիրառվել նաև կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննության ժամկետը երկարացնելու համար:

Չեղինակների կարծիքով, այդուհանդերձ, ինդիքը ոչ այնքան օրենսդրական է, որքան գործնական, և **անհրաժեշտ է աշխատանք տանել դատավորների հետ (վերապատրաստումների, կլոր սեղանների և նման այլ գործիքների կիրառմամբ), որպեսզի վերջիններս առավել նեղ մեկնաբանմամբ կիրառեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ ու 4-րդ մասերով իրենց վերապահված լիազորությունները՝ խուսափելով դիմումի քննության շրջանակում այնպիսի հարցերի ուսումնասիրությունից, որոնք դուրս են Արբիտրաժի մասին օրենքով սահմանված՝ արբիտրաժի վճռի՝ դատարանի կողմից չեղյալ ճանաչվելու հիմքերի շրջանակից:**

### **1.1.9. Կատարողական թերթի տրամադրման վարույթի կասեցման հիմնահարցը**

Օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշակի ինդիքներ կան արբիտրաժի միևնույն վճռի չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումը և դրա հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը զուգահեռ ներկայացնելու դեպքում դիմումների քննության հարցում: Մասնավորապես չկա որևէ պահանջ, որ նման դեպքում երկու դիմումն էլ քննվեն միևնույն վարույթի շրջանակում: Փոխարենը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, կատարողական թերթ տալու վարույթը կասեցվում է, եթե ներկայացվել է վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմում: Այս կարգավորումը գործնականում պարտված կողմին հնարավորություն է ընձեռում մի քանի ամսով հետաձգելու կատարումը՝ վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմում ներկայացնելով (այդ թվում՝ նման դիմումի համար որևէ իրական հիմք չլինելու պարագայում):

Ըստ այդմ առաջարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդվածի 6-րդ մասը վերաշարադրել՝ սահմանելով, որ վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը պետք է քննվի նույն վարույթի շրջանակում, ինչ որ կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը, և երկու դիմումների վերաբերյալ կայացվում է մեկ ընդհանուր որոշում: Այս նորմի ընդունման առնչությամբ նաև անհրաժեշտ կլինի հստակեցնել, թե որ դատավորի վարույթում են միացվում գործերը:

## 1.2. ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաշտարարության գործընթացի կարգավորումը ՀՀ-ում իրականացվում է 2018 թ. ընդունված «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով և նույն թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Թեև երկու իրավական ակտերն էլ պարունակում են կարևոր կարգավորումներ, այդուհանդերձ, հաշտարարության ոլորտում առկա են օրենսդրական ու իրավակիրառ պրակտիկայի մի շարք էական խնդիրներ, որոնք կարող են զգալի խոչընդոտ լինել Հայաստանում հաշտարարության ինստիտուտի զարգացման համար: Ստորև ներկայացնում ենք այն հիմնական խնդիրները, որոնք բացահայտվել են մասնագետների հետ քննարկումների և օրենսդրության ուսումնասիրության շրջանակում:

### 1.2.1. Կատարողական թերթի հիմնախնդիր

Օրենսդրությունը բավականաչափ հստակ չի կարգավորում հաշտարարության արդյունքում կնքված համաձայնության հարկադիր կատարման հետ կապված խնդիրները:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, դատա-

րանը, ստանալով հաշտարարի ծանուցումը վեճը հաշտարարությամբ լուծելու մասին, հաստատում կամ մերժում է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը կամ կարճում է գործի վարույթը՝ ապահովելով հաշտարարության գաղտնիությունը: Համապատասխանաբար, եթե հաշտության համաձայնությունը հաստատվում է դատարանի կողմից, ապա դրա հարկադիր կատարման հարցը լուծվում է դատական ակտերի համար սահմանված ընդհանուր կարգով:

Սակայն առկա է օրենսդրական բաց այն դեպքի համար, երբ հաշտարարությունը իրականացվում է առանց դատարան դիմելու:

Մասնավորապես օրենսգրքի 288-րդ հոդվածը սահմանում է, որ եթե հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնությունը կնքվել է արտադատական կարգով՝ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ, ապա հաշտարարության յուրաքանչյուր կողմ իրավունք ունի հաշտության համաձայնությունը կնքելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում դիմելու իր բնականության վայրի ընդհանուր իրավասության դատարան կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով: Սա առավել խնդրահարույց է այն դեպքերում, երբ հաշտության համաձայնությունը ենթադրում է 6 ամսից երկար կատարում, և կողմերից մեկը այդ ժամկետից հետո դադարում է հաշտության համաձայնության պահանջները կատարելուց: Նման դեպքում մյուս կողմը փաստացի զրկված է անմիջապես հաշտության համաձայնության հիման վրա կատարողական թերթ ստանալու հնարավորությունից և ստիպված է լինելու դիմել դատարան համաձայնության կատարմանը պարտավորեցնելու պահանջով: Հարցված մասնագետներից մեկն այս առնչությամբ նշել է, որ թեպետ այս առումով առկա է խնդիր, սակայն, իր կարծիքով, գործնականում քիչ հավանական է 6 ամսից երկար կատարում ենթադրող հաշտության համաձայնությունների կնքումը: Սակայն հեղինակները չեն կարող համաձայնել նման դիրքորոշմանը, քանի որ պրակտիկայում հնարավոր չէ բացառել ավելի երկար կատարման ժամկետ նախատեսող

հաշտության համաձայնագրերի կնքումը, և առկա օրենսդրական կարգավորումները սահմանափակում են արտադատական հաշտարարության կիրառելիությունը:

Այս առնչությամբ առաջարկվում է **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասում «ընթացքում» բառից հետո լրացնել՝ «(իսկ եթե համաձայնագրի կատարումը տևում է վեց ամսից երկար, ապա՝ համաձայնագրով կատարման համար սահմանված ժամկետում, բայց ոչ ավելի, քան երեք տարվա ընթացքում)»:**

### 1.2.2. Հաշտարարների ռեեստրի վարման հիմնախնդիրը

Հաշտարարության մասին օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ արտոնագրված հաշտարարների ռեեստրը վարում, նրանց ծանրաբեռնվածության և մասնագիտացվածության հաշվառումն իրականացնում է արդարադատության նախարարությունը արդարադատության նախարարի սահմանած կարգով: Արտոնագրված հաշտարարների ռեեստրը տեղադրված է արդարադատության նախարարության կայքում<sup>8</sup>, սակայն նրանց ծանրաբեռնվածության և մասնագիտացվածության հաշվառման կարգ մինչ օրս սահմանված չէ: Նշված կարգի առկայությունը հատկապես էական է դատարանի կողմից հաշտարարի նշանակման դեպքում, երբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, ընտրության չափանիշներ են հենց մասնագիտացումն ու ծանրաբեռնվածությունը:

Այս խնդիրը բարձրաձայնել են և մի շարք հաշտարարներ, որոնք նշել են նաև հետևյալ խնդիրները՝

---

8. Տե՛ս Արտոնագրված հաշտարարների ռեեստրը այստեղ. <http://www.justice.am/page/582>

- Մասնագիտացման ու ծանրաբեռնվածության մասին տեղեկությունների բացակայության պատճառով հաշտարար նշանակելիս դատարանները հաճախ ստիպված են լինում կապվել արդարադատության նախարարության հետ՝ համապատասխան տվյալները հնարավորինս ճշտելու համար, վերջինս էլ անձնական կապերի միջոցով փորձում է հաշտարարների շրջանում համապատասխան ճշտումներ անել, ինչը գործընթացը դարձնում է սուբյեկտիվ:
- Ռեեստրում հաշտարարների տվյալները միասնական ձևաչափով չեն ներկայացված (օրինակ՝ ինքնակենսագրականները միատեսակ չեն), ինչը դժվարացնում է դրանց համեմատությունը:
- Որոշ հաշտարարներ պնդում են, որ ռեեստրը պետք է վարվի հաշտարարների ինքնակառավարվող կազմակերպության կողմից առանձին կայքում, այլ ոչ թե արդարադատության նախարարության կողմից՝ իր կայքում:

Թեպետ բոլոր առաջարկները սկզբունքորեն ընդունելի են, սակայն հաշտարարների ինքնակառավարվող կազմակերպության կողմից առանձին կայքի վարման մասով առաջարկը այս պահին, հեղինակների կարծիքով, վաղաժամ է իրագործել, քանի որ ներկայումս կազմակերպությունը այս նպատակով չունի բավարար ռեսուրսներ:

Ըստ այդմ հեղինակները առաջարկում են, ի կատարումն Հաշտարարության մասին օրենքի 17-րդ հոդվածի, **սահմանել հաշտարարների ծանրաբեռնվածության և մասնագիտացվածության հաշվառման կարգ, որը կապահովի ծանրաբեռնվածության հնարավորինս լիարժեք արձանագրում ու համապատասխան տվյալների հասանելիություն դատարանների համար, ինչպես նաև գործնականում ներդնել հաշտարարների ռեեստրի վարման առցանց հարթակ:**



### 1.2.3. Հաշտարարների նշանակման ընթացակարգը

- Մի շարք մտահոգություններ են հնչել դատարանների կողմից հաշտարարների նշանակման ընթացակարգի վերաբերյալ: Մասնավորապես բարձրացվել են հետևյալ հարցերը.
- Չկան հստակ ընթացակարգեր, թե դատավորն ինչպես է ընտրում և նշանակում հաշտարարին: Հեղինակներն այս առումով արձանագրում են, որ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է նշանակման ընդհանուր կարգ ու չափանիշներ, որոնք այս պահին գործնականում լիարժեք չեն կիրառվում ռեեստրի ոչ լիարժեք լինելու և ծանրաբեռնվածության ու մասնագիտացվածության հաշվառման կարգի բացակայության պատճառով: Ուստի ներկայումս հնարավոր չէ գնահատել այս հարցի արդիականությունը:
- Առաջարկվել է ներդնել հաշտարարների նշանակման ինքնակարգավորվող և ինքնաշխատ կառավարվող համակարգ (ինչպես կատարվել է սևանկության կառավարիչների համար): Ընդհանուր առմամբ ողջունելով սման մոտեցումը՝ հեղինակներն այն առաջարկում են դիտարկել որպես երկարաժամկետ նպատակ, որը պետք է հաջորդի հաշտարարների ռեեստրի համակարգի լիարժեք ներդրմանը:
- Հստակ կարգավորված չէ այն հարցը, թե արդյոք կողմերն են պարտավոր որոշակի ժամկետում կապ հաստատել դատարանի կողմից նշանակված հաշտարարի հետ, թե՞ հաշտարարը՝ կողմերի հետ: Գործնականում հաճախ հաշտարարն է ստիպված լինում կապ հաստատել կողմերի հետ ու համոզել նրանց հանդիպել իր հետ: Ընդ որում՝ դատարանները փաստացի նշանակված հաշտարարին չեն տրամադրում կողմերի կոնտակտային տվյալները կամ

գործի նյութերը, ինչն էապես բարդացնում է կողմերի հետ կապ հաստատելն ու գործին ծանոթանալու ընթացքը:

- Հարցված հաշտարարներից ոմանք նշել են նաև ժամկետների մասով խնդիր: Մասնավորապես նշվել է, որ հաճախ դատարանի կողմից հաշտարարության համար սահմանվում է կարճ ժամկետ (օրինակ՝ 2 շաբաթ), որը բավարար չի լինում կողմերին գտնելու, գործին ծանոթանալու և բուն հաշտարարություն իրականացնելու համար: Միևնույն ժամանակ հեղինակները ցանկանում են արձանագրել, որ հաշտարարի նշանակման վերոգրյալ խնդիրների լուծման պարագայում (գործի նյութերի պատշաճ տրամադրում, կողմերի կոնտակտային տվյալների ապահովում և այլն) գործնականում հնարավոր է նշանակված ժամկետների խնդիր չառաջանա՝ միաժամանակ հաշվի առնելով այն հնարավորությունը, որ կողմերը կարող են համատեղ միջնորդել դատարանին՝ երկարաձգելու այդ ժամկետը մինչև վեց ամիս տևողությամբ:
- Որոշ հաշտարարներ խնդիր են տեսնում այն առումով, որ գործի վաղ փուլում հաշտարարության նշանակման դեպքում հաշտարարը զրկված է լինում որոշ ապացույցներ ձեռք բերելու հնարավորությունից, օրինակ՝ եթե դրանց համար անհրաժեշտ է նշանակել փորձաքննություն: Սակայն հեղինակներն այս մտահոգությունը հիմնավոր չեն համարում, քանի որ փորձաքննություն կարելի է պատվիրել նաև կողմերի նախաձեռնությամբ, և հաշտարարությունը չի ենթադրում դատարանի աջակցություն և ապացույցների ստացման հարցում: Միաժամանակ դատարանները պետք է գնահատեն փորձաքննության արդյունքների կամ այլ ապացույցների կարևորությունը հաշտարարության հաջող իրականացման համար և ապահովեն դրանք մինչև հաշտարարության նշանակումը, եթե դա կարող է զգալիորեն ազդել հաշտարարության հաջողության վրա:

Բարձրացված խնդիրների առնչությամբ առաջարկներ են հնչել օրենսդրական մակարդակով հստակեցնելու հաշտարարի նշանակման ընթացակարգը՝ սահմանելով որոշակի ժամկետներ ու պարտավորություններ հաշտարարի և կողմերի հանդիպման մասով՝ նախատեսելով կողմերի տվյալների ու գործի նյութերի տրամադրման ընթացակարգեր ու պայմաններ:

Նաև նշվել է, որ անհրաժեշտ է դատավորներին հստակ ուղեցույցներ տրամադրել և նրանց շրջանում խթանել վեճերը հաշտարարության ուղարկելը՝ հաշվի առնելով, որ դատարանների դերը հաշտարարության ինստիտուտի կայացման և զարգացման գործընթացում կարող է չափազանց մեծ լինել:

Հիմնվելով բարձրաձայնված խնդիրների ու առաջարկների վրա՝ հեղինակները առաջարկում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (հավանաբար 184-րդ հոդվածի լրացման կամ նոր՝ 184.1 հոդվածի ներառման միջոցով) սահմանել.

- **Հաշտարարություն նշանակելու մասին որոշումը, ինչպես նաև կողմերի՝ դատարանի տրամադրության տակ եղած կոնտակտային տվյալները (ներառյալ, հնարավորության դեպքում, հեռախոսային համարները), ինչպես նաև հայցադիմումի ու հայցադիմումի պատասխանի պատճենները տրամադրվում են հաշտարարին:**
- **Հաշտարարը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին:**
- **Կողմերը պարտավոր են հաշտարարություն նշանակելու մասին որոշումը ստանալու պահից 10-օրյա ժամկետում ներկայանալ հաշտարարի գրասենյակ կամ այլ կերպ համաձայնեցված եղանակով կապ հաստատել հաշտարարի հետ:**

Բացի դրանից՝ առաջարկվում է.

- Աշխատանք տանել դատավորների հետ (վերապատրաստումների, կյոթ սեղանների և նման այլ գործիքների կիրառմամբ)՝ վերջիններիս ներկայացնելու համար հաշտարարության Էությունը, դրա առավելությունները, ինչպես նաև քաջալերելու համար հաշտարարության նշանակումը ու դրա համար բավարար ժամանակ տրամադրելը (օրենքով սահմանված եռամսյա ժամկետի սահմաններում):

#### 1.2.4. Հաշտարարների որակավորում և արտոնագրում

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հաշտարարների որակավորման հանձնաժողովի ձևավորման, գործունեության, որակավորումը շնորհելու և որակավորման վկայագիր տրամադրելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: ՀՀ վարչապետի 2018 թ. օգոստոսի 22-ի ««Հաշտարարության մասին» և «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին» N 1120-Ա որոշման համաձայն՝ «Հաշտարարության որակավորման հանձնաժողովի ձևավորման, գործունեության, որակավորումը շնորհելու և որակավորման վկայագիր տրամադրելու կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 2-ի N 720-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը պետք է ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացվեր 2018 թ. նոյեմբերին, սակայն այն մինչ օրս չի ընդունվել, ինչի հետևանքով հնարավոր չէ իրականացնել հաշտարարների արտոնագրում:

Փաստացի, Հայաստանում հաշտարարներ արտոնագրվել (որակավորվել) են միայն մեկ անգամ՝ մոտ 5 տարի առաջ, որից հետո

հաշտարարների գրեթե կեսը չի զբաղվել հաշտարարությամբ, իսկ մյուս մասն էլ այն չի իրականացնում որպես հիմնական աշխատանք:

Ըստ այդմ, հաշտարարությամբ հետաքրքրված անձանց ներգրավելու նպատակով **անհրաժեշտ է ընդունել Հաշտարարության որակավորման հանձնաժողովի ձևավորման, գործունեության, որակավորումը շնորհելու և որակավորման վկայագիր տրամադրելու կարգ ու կազմակերպել հաշտարարների որակավորում:**

Ընդ որում՝ մի շարք հաշտարարներ մտահոգություններ են հայտնել նախկինում որակավորման վերաբերյալ օրենքի պահանջների առնչությամբ: Մասնավորապես հնչել են հետևյալ մտահոգությունները.

- Նախկինում որակավորման քննությունը բաղկացած էր սուկ օրենսդրական կարգավորումների իմացությունը ստուգող հարցերից: Հաշվի առնելով, որ հաշտարարությունը պահանջում է հմտություններ, որոնք որևէ կապ չունեն **օրենսդրության իմացության հետ, այս առումով առաջարկներ հնչեցին որակավորման քննության շրջանակում ներառել փորձնական գործեր (case-study), որոնք վերջիններս կլուծեն, ինչպես նաև հաշտարարության սիմուլյացիաներ (mock mediation), որոնց շրջանակում թեկնածուները կցուցադրեն հաշտարարության և բանակցություններ անցկացնելու իրենց հմտությունները:** Այս մոտեցման օգտին, ըստ հարցվածների, խոսում է նաև հաշտարարների որակավորման լավագույն միջազգային փորձը: Հեղինակներն ընդհանուր առմամբ համամիտ են այս առաջարկին, **սակայն դրա կիրառմանը պետք է մոտենալ դրա իրագործելիությունն առավել մանրամասն գնահատելուց հետո:**
- Որակավորման հանձնաժողովը բաղկացած է նախարարության ներկայացուցիչներից, նախկին ու ներկա դա-

տավորներից, մեկ հոգեբանից, մեկ իրավաբան գիտնականից և ընդամենը մեկ հաշտարարից: Այս մոտեցումը բավականաչափ հաշվի չի առնում հաշտարարության էական տարբերությունը դատավարությունից ու իրավաբանական այլ գործունեությունից և **չի ապահովում հաշտարարների բավարար ներկայացվածությունն որակավորման հանձնաժողովում**: Որոշ հաշտարարներ ընդգծեցին նաև միջազգային փորձագետների և հաշտարարների ներգրավվածության ցանկալի լինելը, սակայն վերջինս տեխնիկապես խնդրահարույց է, ու ըստ այդմ խնդրահարույց է նման պահանջ ներառել իրավական ակտում:

- Նախկին դատավորների՝ որպես հաշտարարների թեկնածուների թեստավորումից ազատված լինելու հանգամանքը կրկին հաշվի չի առնում հաշտարարության էական տարբերությունը դատավարությունից: Այս առումով հեղինակներն արձանագրում են, որ նախկին դատավորներին, ինչպես նաև իրավաբան գիտնականներին քննությունից ազատելը միանգամայն հիմնավոր է այն պարագայում, երբ քննությունը հիմնված է իրավական գիտելիքների ստուգման վրա (ինչպես որ դա եղել է նախկինում): Սակայն հեղինակները նախկին դատավորներին քննությունից ազատելու մոտեցումը համարում են հիմնավոր: Այն նաև համահունչ է այս ոլորտում միջազգային պրակտիկային:

### 1.2.5. Հաշտարարների վերապատրաստում

Հարցվածների մի մասը բարձրացրեց հաշտարարների վերապատրաստման հարցը: Մասնավորապես, թեպետ Հաշտարարության մասին օրենքի 18-րդ հոդվածը նախատեսում է հաշտարարների ամենամյա պարտադիր վերապատրաստումներ՝ նվազագույնը 24 ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ, սակայն մինչ օրս նման վերապատրաստումներ չեն իրա-

կանացվել: Արդյունքում հաշտարարները կարիք ունեն որակյալ վերապատրաստումների, որոնք, սակայն, չեն իրականացվում: Այս իրավիճակը պայմանավորված է հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության ֆինանսական ռեսուրսների ու ներքին կարողությունների պակասով, քանզի այդ կազմակերպության վրա է դրված վերապատրաստումները կազմակերպելու պարտականությունը: Այս խնդիրը միջնաժամկետ լուծելու համար **հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությանը անհրաժեշտ է աջակցություն վերապատրաստումների կազմակերպման հարցում, այդ թվում՝ միջազգային փորձ ունեցող մասնագետների ներգրավմամբ:**

Որպես լրացուցիչ մեկնաբանություն՝ նշվել է հաշտարարության վերաբերյալ հայերեն գրականության բացակայությունը, ինչը լրացուցիչ խոչընդոտ է որակավորման բարձրացման ու հաշտարարության զարգացման համար: Հարկ է նշել, որ դա ինքնին կարող է լուրջ խոչընդոտ լինել հաշտարարության ոլորտում մասնագիտական կրթության ու գիտելիքների տարածման համար:

#### **1.2.6. Հաշտարարի վարքագծի և հաշտարարության կանոնների բացակայությունը**

Հաշտարարության մասին օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը պետք է սահմանի հաշտարարի վարքագծի կանոնների մանրամասները, իսկ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը ելթադրում է, որ հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը նաև պետք է հաստատի հաշտարարության կանոններ: Սակայն նշված կանոնները մինչ օրս չեն հաստատվել: Այս խնդիրը ևս կապ ունի հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության ժողովի քվորումի, ինչպես նաև դրա ռեսուրսների ու կարողությունների հետ, և այն հնարավորինս սեղմ ժամկետներում լուծելու համար անհրաժեշտ է **աջակցել հաշտարարների ինքնակարգավորվող կազմա-**

**կերպությանը (այդ թվում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ) հաշտարարի վարքագծի կանոնների մանրամասներն ու հաշտարարության կանոնները մշակելու հարցում:**

### **1.2.7. Օտարերկրյա պետություններում կնքված հաշտության համաձայնությունների կիրառում**

Հայաստանում օրենսդրորեն կարգավորված չեն նաև օտարերկրյա պետություններում արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունների հաստատման և կատարման հետ կապված հարցերը: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը 26.09.2019 թ. ստորագրել է «Մեդիացիայի արդյունք հանդիսացող՝ վեճերի կարգավորման վերաբերյալ միջազգային համաձայնագրերի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (որը, սակայն, սույն զեկույցը կազմելու պահին դեռ չի վավերացվել), անհրաժեշտ է նաև ՀՀ օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներին, ինչպեսև ապահովել կոնվենցիայի վավերացումը: Զանի որ այս հարցը ընդհանուր առմամբ դուրս է հետազոտության շրջանակից (կապված չէ Հայաստանում հաշտարարության զարգացման հետ), հեղինակները այս մասով հատուկ առաջարկներ չեն ներկայացնում:

### **1.2.8. Դատարանների կողմից վեճի կողմերի ուղղորդումը հաշտարարության**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է պարզել՝ արդյոք գործին մասնակցող անձինք չե՞ն ցանկանում վեճը լուծել հաշտարարության միջոցով՝ պարզաբանելով հաշտարարության էությունը: Հաշտարարներից շատերը բարձրա-



ձայնում են, որ թեպետ դատարանները մշտապես հարցնում են կողմերին հաշտարարության միջոցով վեճը լուծելու ցանկության մասին, սակայն քիչ թվով դատավորներ են ժամանակ հատկացնում բացատրելու կողմերին, թե որն է դատավարության և հաշտարարության տարբերությունը, ինչ առավելություններ կտա կողմերին հաշտարարությունը: Այս խնդրի մասով մի քանի հնարավոր պատճառներ են նշվում.

- Դատավորները լուրջ չեն ընդունում հաշտարարությունը՝ որպես ՎԱԼ միջոց:
- Առկա է մասնագիտական «մրցակցություն». ենթադրաբար կա թյուր կարծիք, որ եթե դատավորը չի կարող հաշտեցնել կողմերին, ապա չի կարողանա նաև հաշտարարը:
- Հաշտարարության եռթյունը պարզաբանելու պարտավորության բովանդակությունը հստակ սահմանված չէ, ինչպես նաև նախատեսված չէ այն չկատարելու համար որևէ պատասխանատվություն դատավորների համար:

Որպես հնարավոր լուծում՝ առաջարկվում է **ներդնել (օրինակ՝ բարձրագույն դատական խորհրդի միջոցով) պարզ ու մատչելի լեզվով շարադրված տեղեկատվական թերթիկ կամ ուղեցույց հաշտարարության ու դրա առավելությունների վերաբերյալ, որը դատավորները կկիրառեն վեճի կողմերին հաշտարարության եռթյունը պարզաբանելու համար:**

### **1.2.9. Հաշտարարների ինքնակառավարվող կազմակերպության (ան)արդյունավետության հարցը**

Օրենսդրական ու իրավակիրառ պրակտիկայի այլ խնդիրներից զատ ծառայած է հաշտարարների ինքնակառավարվող կազ-

մակերպության (Չաշտարարների ԻԿԿ) արդյունավետության խնդիրը:

Չարցված հաշտարարներն այս առումով նշել են մի շարք օրենսդրական ու գործնական խնդիրներ:

Նշված խնդիրներից առանցքայինը վերաբերում է որոշումների կայացման անկարողությանը քվորումի բացակայության պատճառով: Օրենքի համաձայն՝ Չաշտարարների ԻԿԿ նիստերին քվորում ապահովելու համար անհրաժեշտ է առնվազն անդամների կեսի ներկայությունը: Միաժամանակ, արտոնագրված յուրաքանչյուր հաշտարար, համաձայն Չաշտարարության մասին օրենքի 20-րդ հոդվածի, ինքնաբերաբար դառնում է Չաշտարարների ԻԿԿ անդամ: Չաշվի առնելով, որ ներկայումս արտոնագրված հաշտարարների զգալի մասը փաստացի հետաքրքրված չէ ու չի զբաղվում հաշտարարությամբ՝ վերջին շրջանում որոշում կայացնելու համար չի հավաքվում անհրաժեշտ անդամների քանակ քվորումն ապահովելու համար: Արդյունքում Չաշտարարների ԻԿԿ-ն փաստացի չի կարող որոշումներ կայացնել, ընդհուպ մինչև խնդիր ունի ընտրելու նոր նախագահ, քանի որ չկա քվորում նախագահի ընտրության և նշանակման կարգ հաստատելու և նախագահ ընտրելու համար:

Այս առնչությամբ առաջարկներ են հնչել Չաշտարարների ԻԿԿ-ին անդամակցությունը դարձնել ոչ պարտադիր, քվորումը և որոշումների կայացման հարցում օրենսդրական պահանջները դարձնել ավելի ճկուն կամ սահմանել, որ անհարգելի պատճառով ժողովներին չներկայանալը կարող է հանգեցնել պատասխանատվության, ընդհուպ մինչև անդամության կասեցման:

Չեղիսակների կարծիքով անդամակցության պարտադիր լինելը ինքնակառավարվող կազմակերպության գործունեության Էական պայման է: Ինչ վերաբերում է քվորումի շեմի նվազեցմանը, ապա այն դեմ է նման կազմակերպությունների գործունեության առանցքային դեր ունեցող ներքին ժողովրդավարության

սկզբունքին: Միաժամանակ, հեղինակները կարծում են, որ հաշտարարի արտոնագրի կասեցումը պետք է լինի ծայրահեղ քայլ: Ուստի հեղինակները, որպես խնդրի առավել օպտիմալ լուծում, առաջարկում են **Չաշտարարության մասին օրենքի 21-րդ հոդվածում կատարել լրացում, համաձայն որի՝ ընդհանուր ժողովի քվորումը որոշելիս անդամների թվի հաշվարկում հաշվի չեն առնվում այն անդամները, որոնք առանց հարգելի պատճառի (որի մասին նման անդամը պետք է գրավոր ծանուցի կազմակերպությանը ողջամիտ ժամկետում) չեն մասնակցել նախորդ երկու ընդհանուր ժողովի նիստերին:**

Միաժամանակ, հաշվի առնելով, որ զգալի քանակի արտոնագրված հաշտարարներ փաստացի չեն զբաղվում հաշտարարությամբ, հեղինակները առաջարկում են **Չաշտարարության մասին օրենքի 16-րդ հոդվածում կատարել լրացում, համաձայն որի՝ հաշտարարները կարող են կասեցնել իրենց կարգավիճակը սեփական դիմումով (օրինակ՝ եթե չեն նախատեսում զբաղվել հաշտարարությամբ):**

### 1.3. ԱՆՎՃԱՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ

#### *Անվճար հաշտարարության խնդիրը*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մեկ անգամ կարող է նշանակել մինչև 4 ժամ անվճար հաշտարարություն: Օրենքով, սակայն, սահմանված չէ այդ անվճար հաշտարարության ֆինանսավորման որևէ մեխանիզմ: Պարզ չէ նաև, թե յուրաքանչյուր հաշտարար արդյոք պարտավոր է իրականացնել նման անվճար հաշտարարություն, և եթե այո, ապա առավելագույնը գումարային քանի ժամ:

Հարցված որոշ մասնագետներ պնդում են, որ անվճար հաշտարարության իրականացումը հաշտարարների կողմից անհրաժեշտ է ոլորտի զարգացման համար, և հաշտարարներն իրենք պետք է շահագրգռված լինեն ինստիտուտի զարգացման նպատակով անվճար աշխատանք կատարելու: Հնչել է նաև կարծիք, որ հաշտարարի կողմից գործի և դրա ընթացքի ճիշտ կառավարման պարագայում յուրաքանչյուր դեպքում հաշտարարն անվճար 4 ժամից բացի նաև կիրականացնի վճարովի հաշտարարություն: Մասնավորապես կարծիքի հեղինակը նշել է, որ, որպես կանոն, մի քանի ժամ անհրաժեշտ է գործին ծանոթա-

Նախու, կողմերի հետ կապ հաստատելու ու նախնական քննարկումների համար, և բուն հաշտարարությունը հիմնականում կիրականացվի արդեն իսկ վճարովի հիմունքներով:

Սակայն հարցված հաշտարարների մեծամասնությունը խնդրահարույց է համարում անվճար հաշտարարության ինստիտուտը: Նշվում է, որ հաշտարարներին փաստորեն պարտադրվում է աշխատել առանց որևէ վարձատրության, ինչը հակասում է ինչպես աշխատանքի ընտրության ազատության, այնպես էլ արդարացի վարձատրության և հավասարության սկզբունքներին (օրինակ՝ հանրային պաշտպանի ինստիտուտի շրջանակում ներգրավված հանրային պաշտպանի աշխատանքի համար պետական ֆինանսավորման մեխանիզմներ կան նախատեսված): Բացի այդ՝ որոշ հարցվածներ նշել են, որ վեճի կողմերը մեծ դժվարությամբ են ընկալում, որ անվճար 4 ժամը ներառում է գործին ծանոթանալու և կազմակերպական հարցերով զբաղվելու ժամանակահատվածը: Փոխարենը կողմերը համարում են, որ 4 ժամը վերաբերում է միայն անմիջապես իրենց մասնակցությամբ աշխատանքին: Ըստ այդմ հնչել է առաջարկ, որ կողմերի համար անվճար հաշտարարության մասով պետք է տրամադրվի պետական սուբսիդավորում:

Ամեն դեպքում հարկ է արձանագրել, որ անվճար հաշտարարության հարցը խնդրահարույց է հաշտարարների համար և խոչընդոտում է ոլորտի զարգացումը՝ դրդելով հաշտարարներին խուսափելու դատարանի նախաձեռնությամբ հաշտարարության իրականացումից:

*Պարտադիր հաշտարարության ներդրման  
հնարավորությունը*

Մի շարք հարցվածներ նշեցին, որ հաշտարարությունը առավել արդյունավետ զարգացնելու համար անհրաժեշտ է սահմանել հաշտարարության պարտադիր պահանջ որոշ տեսակի վեճե-

րով, ինչը բավարար պահանջարկ կստեղծի հաշտարարության հանդեպ՝ արդյունքում խթանելով դրա զարգացումը:

Միաժամանակ կան նաև նման մոտեցման դեմ արտահայտվածներ, որոնց կարծիքով Հայաստանն ի վիճակի չէ անցնելու պարտադիր հաշտարարության հետևյալ պատճառներով.

- Ներկայումս հաշտարարների թիվը (արտոնագրված հաշտարարներից ընդամենը 25-30-ն են ներկայումս զբաղվում հաշտարարությամբ, այն էլ՝ ոչ որպես հիմնական ուղղություն) չի բավարարում մեծ պահանջարկը: Ավելին՝ նույնիսկ եղած հաշտարարների շրջանում առկա է որակավորման խնդիր:
- Չկան վերապատրաստման դասընթացներ առկա հաշտարարների համար:
- Ներկայումս չկա հաշտարարների ընտրության հստակ և համակարգված մեխանիզմ, որով հաշվի կառնվեն հաշտարարի մասնագիտացումը և ծանրաբեռնվածությունը:
- Առկա կարգավորումներն արդեն իսկ թույլ են տալիս դատարաններին վեճի լուծման համար նշանակել դատարանի կողմից պարտադրված հաշտարարություն, ուստի դասական իմաստով պարտադիր հաշտարարության ինստիտուտի ներդրման անհրաժեշտություն չկա: Բավարար կլինի, որ դատավորները համապատասխան լիազորությունը ճիշտ և տեղին օգտագործեն:
- Չկան ֆինանսական խթաններ, որոնք կդրդեն որակյալ մասնագետներին կենտրոնանալու հաշտարարության վրա և այն դարձնելու իրենց գործունեության հիմնական ուղղություն:
- Պարտադիր հաշտարարությունը հնարավոր չի լինի առանց պետական ֆինանսավորման:

- Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը դեռ արդյունավետ չի գործում, միաժամանակ ոլորտը չունի պետական բավականաչափ աջակցություն:

Հարցումների արդյունքում ստացված պատասխաններից կարելի է եզրակացնել, որ պարտադիր հաշտարարությունը կարող է արդյունավետ միջոց լինել հաշտարարության զարգացման համար, սակայն միայն այն դեպքում, եթե դրան նախորդեն մի շարք ենթաօրենսդրական ակտերի ընդունում և գործնական բարեփոխումներ: Մասնավորապես խոսքը հաշտարարների որակավորման կարգի ընդունման ու ներդրման, հաշտարարների ռեեստրի լիարժեք ներդրման, հաշտարարների վերապատրաստումների ապահովման, ինչպես նաև հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կայացման համար անհրաժեշտ պետական աջակցության մասին է:

Այս առումով հարկ է նշել, որ պարտադիր հաշտարարությունը վերջին տարիներին բավականին լայն տարածում է ստացել զգալի թվով երկրներում: Ինչպես նշել է Եվրոպական միության խորհրդարանի իրավական հարցերով հանձնաժողովը՝ պարտադիր հաշտարարությունը կարող է դրական ազդեցություն ունենալ դատավարության ժամկետներն ու պետության ծախսերը նվազեցնելու հարցում<sup>9</sup>: Այս առումով նշվում է, որ անհրաժեշտ է հաշվարկել, թե որքան է հնարավոր լինելու կրճատել ժամկետներն ու ծախսերը, ինչպես նաև որպես քաջալերող մեխանիզմ կիրառել պետության կողմից վեճի հետ կապված որոշ ծախսեր հատուցելու հնարավորությունը:

Որոշ երկրներ պարտադիր հաշտարարության պահանջ են ներդրել վեճերի լայն շրջանակի համար (մասնավորապես Իտալիան ու Հունաստանը), սակայն այդպիսի մոտեցումը հաճախ

---

9. Directorate General for Internal Policies Policy Department C: Citizens' rights and Constitutional Affairs, Legal Affairs, "Quantifying the cost of not using mediation-a data analysis"

քննադատվում է և գործնականում խնդիրներ է առաջացնում (ընդհուպ մինչև համապատասխան դրույթների սահմանադրականության վիճարկում):

Պարտադիր հաշտարարություն ներդրած երկրների մեծ մասն այն կիրառում է սահմանափակ ոլորտներում: Այսպես՝ հաշտարարությունը դատարան դիմելու պարտադիր նախապայման է Ֆրանսիայում, Միացյալ Թագավորությունում և Լիտվայում (ընտանեկան վեճեր), Իսպանիայում (աշխատանքային վեճեր): Որպես կանոն՝ պարտադիր հաշտարարության համար սահմանված ժամկետը այս երկրներում չի գերազանցում 3 ամիսը, որից հետո կողմերը ազատ են դիմելու դատարան<sup>10</sup>:

Ընդհանուր առմամբ հիմնական ոլորտները, որտեղ կիրառվում է պարտադիր հաշտարարություն, ընտանեկան ու աշխատանքային վեճերն են, ինչպես նաև հարևանային վեճերը: Ընդ որում՝ հաշվի առնելով, որ աշխատանքային վեճերի մի մասի համար (աշխատանքային պայմանագրի փոփոխման, լուծման և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված վեճեր) ՀՀ օրենսդրությամբ արդեն իսկ սահմանված են քննության կարճ ժամկետներ, իսկ դատական ծախսերը Եական չեն, ուստի Հայաստանի պարագայում տեսականորեն կարող է քննարկվել պարտադիր հաշտարարության ներդրումը ընտանեկան վեճերով (բացառությամբ ալիմենտների բռնագանձման պահանջների):

Միաժամանակ հարկ է նշել, որ մի շարք երկրներ պարտադիր հաշտարարության փոխարեն կիրառում են հաշտարարի հետ կարճատև պարտադիր տեղեկատվական հանդիպման պրակտիկա, որը թույլ է տալիս վեճի կողմերին արագ կողմնորոշվել և գնահատել՝ արդյոք իրենց միջև առկա վեճը առհասարակ

---

10. European Handbook for Mediation Lawmaking, EUROPEAN COMMISSION FOR THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ), As adopted at the 32th plenary meeting of the CEPEJ, Strasbourg, 13 and 14 June 2019, pp. 53-57.



ենթակա է լուծման հաշտարարության միջոցով<sup>11</sup>: Բացի այդ՝ նման տեղեկատվական հանդիպումները կարող են որոշակի չափով լուծել դատարանների կողմից հաշտարարության եռությունը կողմերին բացատրելու խնդիրները:

Ելնելով վերոգրյալից՝ հեղինակներն առաջարկում են.

- **Չրաժարվել անվճար 4 ժամ հաշտարարությունից՝ փոխարենը սահմանելով հաշտարարի հետ պարտադիր անվճար տեղեկատվական հանդիպման պահանջ բոլոր այն դեպքերում, եթե առկա է ողջամիտ հավանականություն վեճը հաշտությամբ ավարտելու:**
- **Հաշտարարության համակարգի լիարժեք ներդրումից հետո դիտարկել մինչև 1 ամիս ժամկետով պարտադիր հաշտարարության պահանջ (որպես դատարան դիմելու նախապայման) ընտանեկան վեճերով (բացառությամբ ալիմենտների բռնագանձման պահանջների): Միաժամանակ, այս պահանջի կատարումից կողմերը կարող են ազատվել դատարանի որոշմամբ՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:**

---

11. European Handbook for Mediation Lawmaking, EUROPEAN COMMISSION FOR THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ), As adopted at the 32th plenary meeting of the CEPEJ, Strasbourg, 13 and 14 June 2019, p. 55.



ԳԼՈՒԽ 2

ՎԵՃԵՐԻ  
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ  
ԼՈՒԾՄԱՆ  
ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ  
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ  
ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐ

## 2.1. ԱՐԲԻՏՐԱԺ

Հարցված մասնագետների մեծ մասը հակված է այն մտքին, որ ՀՀ-ում արբիտրաժի զարգացման ցածր մակարդակը պայմանավորված է ոչ այնքան օրենսդրական, որքան գործնական խնդիրներով: Դրանց թվում առաջնահերթ նշվում են արբիտրաժի նկատմամբ վստահության պակասը, արբիտրաժային հաստատությունների գործունեության մասին իրազեկվածության պակասը, ինչպես նաև այդ հաստատությունների ոչ բավարար կայացած լինելն ու դրանց կազմում որակավորված, այդ թվում՝ միջազգային փորձ ունեցող մասնագետների ոչ բավարար ներգրավվածությունը: Հնարավոր օբյեկտիվ պատճառների ցանկում նշվում է ՀՀ-ի տնտեսապես ոչ բավականաչափ զարգացած լինելը: Այս առումով նշվում է, որ արբիտրաժը պահանջված ՎԱԼ մեխանիզմն է տնտեսապես հզոր և զարգացած գործարար միջավայր ունեցող երկրներում, որտեղ արբիտրաժից օգտվող պոտենցիալ հաճախորդները գիտակցում են դրա արդյունավետությունը և առավելությունները, մինչդեռ նույնը չենք կարող ասել ՀՀ գործարար միջավայրի մասին: Հարցվածները նշել են նաև որոշ տեխնիկական խնդիրներ:

Քանի որ թե՛ խնդիրները, թե՛ դրանց լուծման ճանապարհները փոխկապակցված են, ստորև խմբավորված ներկայացնում ենք նախ խնդիրները, այնուհետև՝ դրանց լուծման հնարավոր ուղիները:

## 2.1.1. Արբիտրաժի զարգացման խոչընդոտներ

### *Իրազեկվածության պակաս*

Մասնագետների մեծամասնությունը արբիտրաժի զարգացման էական խոչընդոտներից է համարում իրազեկվածության պակասը: Առաջին հերթին հասարակության, սակայն որոշ չափով նաև իրավաբանների շրջանում ցածր է իրազեկվածությունը ինչպես արբիտրաժի ելության, այնպես էլ դրա առավելությունների (վեճի արագ քննություն ու վերաքննության բացակայություն, գումարային պահանջներով պոտենցիալ ավելի ցածր ծախսեր, արբիտր ընտրելու հնարավորություն, հարկադիր կատարման հնարավորություն, որոշակի առումով դատական վերահսկողության մեխանիզմ, հայցի ապահովման միջոցների կիրառման հնարավորություն՝ ընդհուպ նախքան արբիտրաժի սկսելը կամ արբիտրի նշանակվելը, գաղտնիություն) հարցում:

Առաջին հերթին հենց իրազեկվածության բացակայության պատճառով է, որ Հայաստանում արբիտրաժը, որպես կանոն, չի ընկալվում որպես վեճի լուծման գործնական մեխանիզմ:

Իրազեկվածության ցածր մակարդակի պատճառները տարբեր են: Չկան արբիտրաժը քարոզող և տարածող գովազդներ, քիչ են արբիտրաժին նվիրված միջոցառումներն ու քննարկումները: Թերի է նաև կրթական բաղադրիչը՝ բուհերից շատերի իրավաբանական բաժինները չունեն արբիտրաժին նվիրված դասընթացներ/ծրագրեր:

Խնդրահարույց է նաև դատավորների շրջանում արբիտրաժի ոլորտի մասին բավարար տեղեկացվածության բացակայությունը, մասնավորապես արբիտրաժին աջակցություն ցուցաբերելու և դատարանի կողմից արբիտր նշանակելու անհրաժեշտության դեպքերում:

## *Համակարգային և կազմակերպական խնդիրներ*

Համակարգային առումով կենտրոնական խնդիր է Հայաստանում ուժեղ, հեղինակավոր և ճանաչված արբիտրաժային հաստատության/կենտրոնի բացակայությունը, ինչպես նաև բավարար քանակի պրոֆեսիոնալ ու փորձառու արբիտրների (այդ թվում՝ միջազգային փորձով) բացակայությունը: Հատկանշական է, որ նույնիսկ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատության կազմում ներգրավված արբիտրների զգալի մասը որևէ գործով արբիտր չի նշանակվել ու որպես արբիտր հանդես գալու փաստացի փորձառություն չունի:

Անշուշտ, այստեղ առկա է «հավի ու ձվի խնդիրը», դժվար է հստակ որոշել՝ արդյոք քննարկված մյուս խնդիրներն են բավականաչափ կայացած արբիտրաժային հաստատության բացակայության պատճառը, թե՞ հակառակը: Սակայն պետք է արձանագրել, որ արբիտրաժի զարգացման համար անհրաժեշտ է այս բոլոր խնդիրների լուծման ուղղությամբ զուգահեռաբար աշխատել: Առանց բավականաչափ ուժեղ արբիտրաժային հաստատության՝ մյուս խնդիրների լուծման ուղղությամբ գործողությունները չեն կարող բավարար արդյունք ունենալ և կարող են նույնիսկ հակառակ արդյունքի հանգեցնել:

Կազմակերպական բնույթի խնդիրների շարքում հարցվածները նշել են գործի էլեկտրոնային կառավարման գործիքների բացակայությունը (օրինակ՝ փաստաթղթերի ներկայացման ու տեղեկությունների ստացման համար), արբիտրների մասին տեղեկությունների ոչ լիարժեք ներկայացումը (ներկայացված տեղեկատվության մեջ չկան հստակ տեղեկություններ արբիտրի նեղ մասնագիտացման ու արբիտրաժի ոլորտում փորձի մասին): Վերջին հարցն առավել խնդրահարույց է լինում հատկապես այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում արբիտր նշանակել դատական կարգով, քանի որ ընտրություն կատարելու համար դատավորներին հասանելի չեն բավարար տեղեկություններ:

## *Վստահության պակաս*

Ընդհանուր առմամբ, վստահության պակասը պայմանավորված է արբիտրաժի ոլորտում առկա այլ խնդիրներով, որոնց մասին խոսվում է վերը: Այսպես՝ հարցվածները որպես հասարակության շրջանում անվստահության առավել հավանական պատճառ նշում են տեղեկացվածության (իրազեկվածության) պակասը, ինչպես նաև այն ընկալումը, որ եթե անկախության ու հստակ կարգավորված ընթացակարգերի պարագայում դատարաններում կան կոռուպցիոն ռիսկեր, ապա նման երաշխիքներ ու ընթացակարգեր չունեցող արբիտրաժային հաստատությունում կոռուպցիոն ռիսկերն ավելի բարձր են: Հարկ է նշել, որ իրազեկվածության մակարդակը բարձր չէ նաև մասնագետների (իրավաբանների) շրջանում: Ավելին՝ երբեմն գաղտնիությունը ընկալվում է որպես հնարավոր չարաշահումների և կոռուպցիայի ռիսկի գործոն:

Ինչպես հասարակության, այնպես էլ իրավաբանների շրջանում արբիտրաժից խուսափելու լրացուցիչ գործոն է նաև գործով վճռի բողոքարկման հնարավորության բացակայությունը: Հատկապես փաստաբանների մասով կարծիք է հնչել, որ որոշ դեպքերում փաստաբանները խուսափում են արբիտրաժից, քանի որ արբիտրների ընտրությանը մասնակցելու պարագայում հետագայում վստահորդին ավելի բարդ է լինելու հնարավոր պարտությունը ներկայացնել որպես կոռուպցիայի հետևանք (այլ ոչ թե փաստացի կողմի դիրքերի թույլ լինելու կամ փաստաբանի ոչ ճիշտ գործողությունների հետևանք):

Որոշ չափով խնդրահարույց է նաև ֆինանսական բաղադրիչը, այն է՝ առաջին հայացքից արբիտրաժն ավելի ծախսատար է (թե՛ արբիտրների ու արբիտրաժային հաստատության գծով ծախսերի, թե՛ փաստաբանների վարձատրության տեսանկյունից): Սակայն այս մտահոգությունը որոշ չափով թերի իրազեկվածության պատճառ է, քանի որ առնվազն գումարի բռնագանձման պահանջներով վերաքննիչ ու վճռաբեկ դատարան-

ներում գործի դատական քննության դեպքում դատական ծախսերը, որպես կանոն, ավելի մեծ են լինում:

Հարցված մի շարք իրավաբաններ որպես էական գործոն նշում են այն, որ փաստացի գործող արբիտրաժային հաստատություններում (թերևս բացառությամբ ՀԲՄ ֆինանսական արբիտրաժային դատարանի, որը, սակայն, իր նեղ մասնագիտացման պատճառով չի կարող ազդել ոլորտի ընդհանուր պատկերի վրա) անհամաչափորեն ներկայացված են մեկ կամ մի քանի իրավաբանական գրասենյակների ներկայացուցիչներ կամ այլ կերպ միմյանց հետ մտերիմ կապեր ունեցող անձինք (որպես արբիտրաժային հաստատությունների ղեկավար և արբիտր), ինչը էական կասկածներ է առաջացնում անաչառության ու օբյեկտիվության վերաբերյալ:

Այս առումով խնդիրն ավելի է խորանում արբիտրների վարքագծի և էթիկայի կանոնների մասով առկա թերությունների պայմաններում, որոնք քննարկվել են վերը՝ օրենսդրությանը նվիրված բաժնում:

### *Մրցակցության խնդիրներ*

Որոշ հարցված մասնագետներ նշում են, որ դատարանների կողմից նկատվում է որոշակի մրցակցություն արբիտրաժի հետ: Ըստ հարցվածների՝ դատարանները չեն ցանկանում իրենց իշխանությունը «կիսել» որևէ այլ կառույցի հետ և ունեն արբիտրաժի նկատմամբ վստահության խնդիր:

Նշվել է, որ անհրաժեշտ է երկխոսություն ծավալել դատարանների հետ՝ ապահովելու համար դատարանների կողմից արբիտրաժի հանդեպ ավելի հանդուրժող ու կառուցողական մոտեցում: Այդ շրջանակում մասնավորապես առաջարկվել է պարզաբանել այն մոտեցումը, որ զգալի քանակի գործեր (հաշվի առնելով վեճի բնույթը, բարդությունը, գաղտնիության

պահանջները և այլն) առավել նպատակահարմար է լուծել արբիտրաժային վարույթով՝ առանց դատարաններին ծանրաբեռնելու՝ հաշվի առնելով, որ դատարանները ամեն դեպքում պահպանում են սահմանված դեպքերում արբիտրաժային վճիռը ոչ իրավաչափ ճանաչելու իրավասությունը:

Դատարանների հետ «մրցակցության» հարցը կապված է նաև այն հանգամանքի հետ, որ ներկայումս գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումից հետո դատարանները ոչ մեծ գումարների դրամական պահանջի մասին վեճերը սկսել են լուծել պարզեցված վարույթի շրջանակում, որն ապահովում է գործի արագ քննություն: Դրան գումարվում են գործը հայցվորի կողմից «հեռակա կառավարելու» հնարավորությունը (այն է՝ առանց դատական նիստերին մասնակցության գործի ընթացքին հետևելու հնարավորությունը) և այն փաստը, որ հատկապես ֆինանսական կազմակերպությունների պահանջներով պարտապանները հազվադեպ են բողոքարկում վճիռները: Արդյունքում դատարանը փաստացի ավելի իրապուրիչ է, քան արբիտրաժը՝ գործի քննության ընդհանուր ժամկետների ու պարզության առումով: Սակայն այս խնդիրը հիմնականում վերաբերում է ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկառուներից գումարի բռնագանձման մասին պահանջների քննությանը և չի կարող համարվել ընդհանուր խոչընդոտ Հայաստանում արբիտրաժի զարգացմանը: Ընդհանուր առմամբ արբիտրաժի են հանձնվում համեմատաբար ավելի բարդ վեճեր, որոնց պարագայում այս խնդիրները էական դեր չեն խաղում:

### **2.1.2. Իրազեկվածության մեծացման, վստահության բարձրացման և զարգացման ուղիներ**

Հարցվածները որպես արբիտրաժի զարգացման համար անհրաժեշտ քայլեր նշել են իրազեկվածության ու վստահության բարձրացմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հա-



մակարգային լուծումներ: Վերջիններս քննարկվում են ստորև առանձին:

Հարցվածների մի մասը նշել է, որ իրազեկման աշխատանքները հարկ է առավելապես տանել ոչ թե համապետական մակարդակով և հասարակության լայն շերտերի հետ, այլ նեղ մասնագիտական և պոտենցիալ «օգտվողների» շրջանակում՝ իրավաբանական գրասենյակների, փաստաբանների, բանկերի, մեծ ընկերությունների իրավաբանների, որոնք փաստացի կարող են զարգացնել և ակտիվացնել ոլորտը՝ այն ապահովելով թե՛ գործերով, թե՛ որակյալ արբիտրների ծավալով:

Որպես իրազեկվածության մեծացմանն ու վստահության բարձրացմանն ուղղված քայլեր նշվել են հետևյալները.

- I. Բուհերում արբիտրաժի դասավանդման ընդլայնում (այս պահին ոչ բոլոր բուհերում է դասավանդվում արբիտրաժ):
- II. Ուսանողների շրջանում դրա ակտիվ քարոզի ապահովում և տարածում, դատախազերի առավել հաճախ կազմակերպում:
- III. Գործող արբիտրների և փաստաբանների համար մասնագիտացած վերապատրաստումների իրականացում, կրթական նյութերի պատրաստում և տարածում (հեղինակներն այս առումով հարկ են համարում ավելացնել՝ աշխատանք դատավորների հետ՝ ուղղված արբիտրաժի վերաբերյալ կառուցողական երկխոսության ձևավորմանը):
- IV. Մասնագիտական միջավայրում պարբերաբար մասնագիտական քննարկումների (այդ թվում՝ աշխատանքային խմբերի ձևաչափով) ծավալում ՀՀ-ում արբիտրաժի զարգացման վերաբերյալ, հատկապես դատաիրավական բարեփոխումների համատեքստում:

- V. Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների խթանում իրենց վեճերը արբիտրաժ տեղափոխելու նպատակով:
- VI. Պետության կողմից խրախուսական միջոցառումների իրականացում՝ ընդհուպ մինչև պետության մասնակցությամբ որոշակի գործերի (երբ պետությունը հանդես է գալիս որպես մասնավոր իրավունքի սուբյեկտ) ուղղորդում արբիտրաժ:
- VII. Պետության կողմից իրականացվող քայլեր՝ ուղղված աշխարհում կամ տարածաշրջանում Հայաստանը որպես արբիտրաժի հրապուրիչ վայր ներկայացնելուն (հիմնվելով օրենսդրության՝ միջազգային ստանդարտներին համապատասխանության վրա ու դրան հավելելով մատչելիությունը և հնարավոր արտոնությունները, օրինակ՝ հարկային):

Որոշ հարցվածներ նշել են նաև, որ արբիտրաժի նկատմամբ վստահության ամրապնդման համար պետք է ապահովել նոր և միջազգային տարր ունեցող արբիտրաժային հաստատության ստեղծումը: Այս առաջարկը առավել մանրամասն քննարկվում է ստորև:

Հեղինակները կարծում են, որ **I-IV կետերում նշված առաջարկները խիստ կարևոր են, սակայն բավարար չեն իրագեկվածության ու արբիտրաժի հանդեպ վստահության պատշաճ մակարդակ ապահովելու համար:** Մասնավորապես հեղինակները կարծում են, որ **նշված միջոցառումները պետք է ի սկզբանե համատեղել օրենսդրական** (այս առումով հատկապես կարևոր է արբիտրաժային հաստատություններում շահերի բախման կանոնակարգերի ներդրումը) **ու կազմակերպական** (մասնավորապես գործի էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում) **խնդիրների լուծման հետ: Միայն բոլոր նշված միջոցների զուգահեռ կիրառումն է,**

**որ կարող է բավարար նախադրյալներ ստեղծել Հայաստանում արբիտրաժի գարգացման համար:**

Միաժամանակ, թեև առաջնահերթ է հենց մասնագիտական շրջանակում իրազեկվածության բարձրացումը, **սակայն դրան պետք է հաջորդի նաև առնվազն գործարարների շրջանում իրազեկումը՝** բիզնես միավորումների (առևտրաարդյունաբերական պալատներ, գործատուների միություն, ոլորտային ասոցիացիաներ) ու անմիջապես բիզնեսին ուղղված միջոցառումների միջոցով: Դրանք պետք է ներառեն ինչպես հստակ տեղեկություններ արբիտրաժի առավելությունների մասին, այնպես էլ որոշ «հաջողության պատմություններ» (գաղտնի տվյալների բացահայտումը բացառող ծավալով տեղեկություններ արբիտրաժում քննված գործերի մասին, արբիտրաժի մասին մասնակիցների դրական արձագանքներ (testimonials) և այլն):

Ինչ վերաբերում է բանկերի ու այլ ֆինանսական կազմակերպությունների հետ աշխատանքին, ապա դրա կարևորությունը, հեղինակների կարծիքով, գերազնահատված է: Այսպես՝ նման կազմակերպությունների դատական վեճերի մեծ մասը կապված է համեմատաբար ոչ մեծ գումարների բռնագանձման պահանջների հետ (collection): Նման պահանջների քննությունը առավել նպատակահարմար է շարունակել դատական կարգով (հաշվի առնելով պարզեցված վարույթի հնարավորությունը) կամ Բանկերի միության ֆինանսական արբիտրաժում: Նման գործերի պարզ ու տեխնիկական բնույթից և համեմատաբար փոքր հայցապահանջներից ելնելով՝ դրանց քննությունը արբիտրաժում չի կարող էականորեն նպաստել արբիտրաժի գարգացմանը:

Ավելի բարդ գործերը արբիտրաժին հանձնելու առումով բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների իրազեկման միջոցառումները որևէ էական առանձնահատկություն չունեն՝ ի տարբերություն այլ ձեռնարկությունների, ու նրանց մասով հատուկ մոտեցումը հիմնավորված չի թվում:

Ինչ վերաբերում է պետության կողմից արբիտրաժի խրախուսման հարցին, ապա, հեղինակների կարծիքով, իրատեսական չէ ակնկալել, որ պետությունը կպնդի իր մասնակցությամբ մասնավոր իրավունքի գործերը հանձնել արբիտրաժ, քանի որ այդպիսի քայլը կարող է ընկալվել որպես դատական իշխանության հանդեպ անվստահության դրսևորում: Սակայն, որպես այդպիսին, պետության կողմից խրախուսումը ողջունելի կլիներ:

Վերջապես՝ աշխարհում Հայաստանը որպես արբիտրաժի հրապուրիչ վայր ներկայացնելու պետության քայլերի մասին կարելի է խոսել միայն տեղական հզոր միջազգային կամ տարածքային արբիտրաժի կենտրոնի զարգացմանը համընթաց, և կոնկրետ քայլերը պետք է արվեն՝ ելնելով փաստացի իրավիճակից:

### **2.1.3. Նոր արբիտրաժային հաստատության անհրաժեշտություն, առկա հաստատությունների բարելավումը**

Թեև որոշ հարցվածներ պնդում են, որ անհրաժեշտ է Հայաստանում ստեղծել նոր արբիտրաժային հաստատություն, այդուհանդերձ, հարցվածների մեծ մասը կարծում է, որ նման անհրաժեշտություն չկա: Կարծիք է հնչել, որ անհրաժեշտ է առաջին հերթին ստեղծել արբիտրաժի պահանջարկ և հետո միայն մտածել նոր արբիտրաժային հաստատությունների ստեղծման մասին: Ըստ համապատասխան մասնագետների՝ հաստատության ստեղծումը պետք է թելադրի պահանջարկը, և դրա ստեղծումը պետության համար չպետք է լինի ինքնանպատակ:

Ընդհանուր առմամբ, համաձայնելով զարգացման «բնական» սցենարի կողմնակիցների հետ, հեղինակները, սակայն, հարկ են համարում ևս մեկ անգամ նշել, որ այս առումով առկա է «հավի ու ձվի խնդիրը»՝ դժվար է հստակ որոշել՝ արդյոք քննարկված մյուս խնդիրներն են բավականաչափ կայացած արբիտրաժային հաստատության բացակայության պատճառը, թե՞

հակառակը: Հեղինակների կարծիքով այս առումով պատճառահետևանքային կապը երկկողմանի է: Նշված խնդրի լուծումը հնարավոր է թե՛ առկա արբիտրաժային կառույցներից մեկի զարգացմամբ, թե՛ նոր կառույցի ստեղծմամբ: Որպես կանոն՝ երկրի հիմնական արբիտրաժային հաստատությունը ստեղծվում է առևտրի և արդյունաբերության ազգային պալատին կից: Սա ենթադրում է, որ Հայաստանում տեսականորեն կարելի է դիտարկել ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատության հզորացման ու զարգացման հնարավորությունը: Սակայն այս առումով հարկ է հաշվի առնել, որ հարցվածների մի մասը կասկածներ ունի հաստատության ներկայիս կազմի բազմապրոֆիլության ու մասնագիտացվածության, ինչպես նաև ներքին ընթացակարգերի թափանցիկության առնչությամբ: Ուստի կարևոր է, որ համապատասխան կառույցը բաց լինի արբիտրների կազմի ընդլայնման ու որակավորման և թափանցիկության բարձրացման ու այլ բարեփոխումների իրականացման համար: Հակառակ դեպքում հեղինակներն ավելի հակված կլինեն նոր արբիտրաժային հաստատության ստեղծման տարբերակին, քանի որ այն ի սկզբանե կաշկանդված չի լինի պատմական խնդիրներով ու հնարավոր վարկանիշային ռիսկերով:

Անկախ ընտրված տարբերակից՝ անհրաժեշտ է լինելու ձեռնարկել մի շարք քայլեր արբիտրաժային հաստատության կայացման ուղղությամբ: Այս առնչությամբ հարցվածները ներկայացրել են հետևյալ առաջարկները.

1. Առաջարկներ՝ ուղղված առկա հաստատությունները զարգացնելուն/բարելավելուն.
  - Արբիտրների ցանկերի վերանայում, տվյալների միասնական և էլեկտրոնային բազայի ստեղծում, որը հնարավորություն կտա հեշտությամբ ընտրելու և նշանակելու արբիտր:

- Միջազգային արբիտրաժի կարողությունների ստեղծում, արբիտրների ցանկի համալրում նոր և պրոֆեսիոնալ միջազգային արբիտրներով:
- Վարքագծի, էթիկայի, ինչպես նաև շահերի բախման կանոնակարգերի, ընթացակարգերի, ուղեցույցների մշակում ու ներդրում:
- Առկա հաստատությունների գովազդում ու առաջխաղացում (promotion)՝ միջազգային հեղինակությունը բարձրացնելու համար:

2. Առաջարկներ՝ ուղղված նոր արբիտրաժային հաստատության կայացմանը.

- Մշակել մոդել և գնահատել այն գործերի ծավալը, որոնք պետք է հանձնել հաստատությանը: Հարցվածների մեծ մասը կարծում է, որ անհրաժեշտ է ապահովել թե՛ ներպետական, թե՛ միջազգային արբիտրաժային գործեր քննելու հնարավորություն, ունենալ բազմապրոֆիլ արբիտրաժային կենտրոն:
- Գտնել և ներգրավել միջազգային փորձագետների, արբիտրների և միջազգային արբիտրաժային կենտրոնների մասնագետների, հաստատել համագործակցության ուղիներ այդպիսի կենտրոնների հետ, հատկապես հիմնադրման պահից առաջին 1-2 տարում:
- Ներգրավել սփյուռքում արբիտրաժային ոլորտում հաջողած մեր հայրենակիցներին, որոնցից շատերը այս պահին պատրաստ են և ցանկանում են օգնության հասնել ՀՀ-ին:
- Մշակել միջազգային չափանիշների համապատասխանող կանոններ ու այլ ընթացակարգեր, ունենալ հստակ համակարգ ինչպես կենտրոնի կառավար-

ման, այնպես էլ կենտրոնի միջոցով արբիտրաժային գործերի վարման վերաբերյալ (proper secretariat):

- Աշխատանքներ տանել ԱՊՀ երկրների գործարարների շրջանում Հայաստանը որպես իրենց արբիտրաժի վայր ընտրելու գրավչությունը բարձրացնելու ուղղությամբ:

Երկու դեպքում էլ հարցվածների ներկայացրած առաջարկությունները բավականին նման են, և դրանց հիման վրա կարելի է ամփոփել հիմնական քայլերը (ներառված են նաև հեղինակների առաջարկները՝ հիմնված վերլուծության վրա)։

- **Արբիտրաժային հաստատությունում ներգրավված արբիտրների մասին մանրամասն տվյալներով բազայի ստեղծում** (ներառյալ մանրամասն տեղեկություններ մասնագիտացումների ու փորձի մասին):
- **Արբիտրների ցանկի առավել ընդլայնում՝ ներգրավելով ինչպես ներքին շուկայում առկա մասնագետների, այնպես էլ սփյուռքի՝ արբիտրաժի կամ առանձին երկրի իրավունքի ճանաչված մասնագետների** (առաջին հերթին թիրախավորելով աշխարհում ու տարածաշրջանում առավել հաճախ կիրառվող իրավունքի երկրները (Անգլիա, Շվեյցարիա, Ռուսաստան, ԱՄՆ որոշ նահանգներ՝ Նյու Յորք, Կալիֆոռնիա, Դելավեր և այլն)):
- **Հաստատել համագործակցություն միջազգային արբիտրաժային կենտրոնների հետ՝ փորձի փոխանակման, կայացման ուղղությամբ մասնագիտական աջակցություն ստանալու համար** (օրինակ՝ արբիտրների մենթորություն (mentoring)):

- **Ներդնել գործերի կառավարման համակարգ** (ներառյալ գործերի առցանց կառավարում, նիստերի հեռակա վարման մեխանիզմներ, հաստատության քարտուղարություն՝ հստակ լիազորություններով ու կարողություններով):
- Պետության հետ համագործակցությամբ (ինստիտուցիաների հետ) պետության աջակցությամբ) **իրականացնել Հայաստանը որպես տարածաշրջանային արբիտրաժի վայրի գաղափարի առաջխաղացմանն (promote) ուղղված միջոցառումներ** (առնվազն իրազեկման, ցանկալի է նաև պետության կողմից որոշ արտոնությունների տրամադրման միջոցով):



## 2.2. ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրականացված հետազոտությունը փաստում է, որ ՀՀ-ում հաշտարարության ինստիտուտի չկայացած լինելու հանգամանքը, գործերի սակավությունը և համակարգի ոչ արդյունավետ գործունեությունը հետևանք են ոչ միայն թերի օրենսդրական դաշտի, այլև նաև մի շարք կիրառական և գործնական խնդիրների: Այդպիսի խնդիրների շարքում նախ և առաջ անհրաժեշտ է առանձնացնել իրազեկվածության և դրանով պայմանավորված վստահության պակասը, դատարանների և դատավորների մեջ հաշտարարության ինստիտուտի նկատմամբ թերահավատության առկայությունը և, դրանով պայմանավորված, օժանդակության պակասը, որակյալ, շուկայում փորձառու և հեղինակավոր հաշտարարների պակասը և այլն: Բացի դրանից՝ պետք է նկատել, որ առանց անհրաժեշտ պետական աջակցության՝ հաշտարարության ինստիտուտի հաջողումը ՀՀ-ում մեծ վտանգի տակ է: Ստեղծված իրավիճակի բարելավումը հնարավոր կլինի ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ կազմակերպական բարելավումների իրականացմամբ:

Այս առումով հեղինակները ստորև առանձնացրել են հիմնական գործնական մարտահրավերներն ու խնդիրները, որոնք ծառայած են հաշտարարության ինստիտուտի առջև, և դրանց լուծման հնարավոր եղանակները:

### 2.2.1. Հաշտարարության ոլորտի գործնական խնդիրները

#### *Իրազեկվածության պակաս*

Ինչպես ՎԱԼ ցանկացած եղանակի, այնպես էլ հաշտարարության ամենակարևոր գործնական խնդիրներից է իրազեկվածության պակասը: Դժվար է հստակ նշել՝ արդյոք իրազեկվածության պակասը պայմանավորված է ինստիտուտի ՀՀ-ում չկայացած լինելու հանգամանքով, թե՞ հակառակը՝ ինստիտուտը չի կայացել, քանի որ առկա է իրազեկվածության պակաս: Այնուամենայնիվ, իրազեկվածության խնդիրները ՀՀ-ում ուրույն տեղ ունեն: Հարցվածների մեծ մասի գնահատմամբ՝ իրազեկվածության և հաշտարարության առավելությունների մասին տեղեկատվության պակաս նկատվում է ինչպես հասարակության լայն շերտերի մեջ, այնպես էլ իրավաբանական համայնքում, մասնավորապես փաստաբանների, դատավորների և նույնիսկ որոշ արտոնագրված հաշտարարների շրջանում:

Մատնանշված խնդիրն առնչվում է հաշտարարության այնպիսի կարևոր հատկանիշների վերաբերյալ տեղեկատվության պակասին, ինչպիսիք են հաշտարարության էությունը, նշանակությունը, բովանդակությունն ու տարբերությունը դատավարությունից ու արբիտրաժային վարույթից: Ակնհայտ է՝ որպեսզի անձինք ցանկանան իրենց միջև առկա վեճը հաշտարարությամբ լուծել և դիմեն հաշտարարին, նախ և առաջ անհրաժեշտ է, որ վերջիններս պատկերացում ունենան, թե որոնք են հաշտարարության հիմնական առավելությունները, ինչն է այն դարձնում առավել արդյունավետ և գրավիչ, որ տեսակի վեճերի դեպքում է հաշտարարության եղանակով վեճի լուծումը առավել հավանական: Այս ամենը պահանջում է իրազեկվածություն, ամփոփ և մատչելի տեղեկատվության առկայություն:

Իրազեկվածության պակասն առավել խնդրահարույց է փաստաբանների պարագայում: Քանի դեռ վեճի կողմի փաստաբա-

նը շահագրգռված չէ գործը հաշտարարությամբ լուծելու կամ անձամբ չի վստահում և հավատում հաշտարարության արդյունավետությանը կամ չի ներկայանում հաշտարարությանը կամ իր վստահորդին չի բացատրում հաշտարարության առավելությունները, հնարավոր չէ խոսել հաշտարարության ինստիտուտի կայացման կամ տարածման մասին: Այս առումով շատ կարևոր է փաստաբանական համայնքի դերը հաշտարարության ինստիտուտի զարգացման գործում:

Հարցվածներից գրեթե բոլորը համակարծիք էին, որ հասարակության և փաստաբանների շրջանում առավել հաճախ հանդիպող տեղեկատվական սխալները վերաբերում են հետևյալին.

- Հաշտարարության և դատավարական կամ արբիտրաժային գործընթացների տարբերությունների մասին տեղեկացվածության պակաս:
- Հաշտարարության գաղտնի բնույթի, գաղտնիության մասին տեղեկացվածության պակաս:
- Արտադատական հաշտարարության առավելությունների մասին տեղեկացվածության պակաս:
- Համատարած սխալ ընկալում, թե հաշտարարը դատավորի նման վեճը լուծող մարմին է, որը պարտավոր է լուծել վեճը կողմերի համար կամ նրանց փոխարեն՝ կայացնելով որոշում:
- Գիտակցության պակասը, որ իրական վեճը լուծողը հենց կողմերն են, իսկ հաշտարարի դերը բացառապես բանակցային հարթակ տրամադրելն ու բանակցությունները խթանելն է:

Այս առումով չափազանց կարևոր է արձանագրել, որ ներկայումս ՀՀ-ում իրականացվող հաշտարարության գործընթացների մեծամասնությունը դատարանի կողմից նշանակված պար-

տաղիր հաշտարարության դեպքերն են (դատարանի դերի և աջակցության պակասի մասին տե՛ս հաջորդ բաժնում): Քիչ են դեպքերը, երբ վեճի կողմերը ինքնուրույն և արտադատական կարգով ներգրավել են հաշտարարի և վեճի փաստացի լուծումը իրականացրել հաշտարարության միջոցով: Այս պրակտիկայի ամենաառաջնային պատճառներից մեկը արտադատական հաշտարարության թերի կարգավորումներից զատ նաև դրա մասին տեղեկացվածության և իրազեկվածության պակասն է:

### *Վստահության խնդիրներ*

Իրազեկվածության պակասը շատ դեպքերում ուղղակիորեն հասցնում է վստահության պակասի: Այս մասով նույնպես խնդիրը փոխկապակցված է արբիտրաժի մասին բարձրաձայնված խնդիրների հետ:

Չարցված հաշտարարների մեծ մասը կարծում է, որ ներկայումս ԶԶ-ում կա թյուրըմբռնում, որ եթե բազմամյա փորձ և բարձրագույն կրթություն ունեցող դատավորը ի վիճակի չէ հաշտեցնելու կողմերին և լուծելու նրանց միջև վեճը, ապա ինչպե՞ս վստահել այդպիսի վեճի լուծումը հաշտարարին, որի նկատմամբ չկան սահմանված օրենսդրական նույնատիպ բարձր պահանջներ: Այստեղ խնդիրը կրկին իրազեկվածության և տեղեկատվության պակասն է, քանի որ հասարակության լայն շերտերում դեռևս չեն ընկալում, թե որն է հաշտարարի դերը, որոնք են նրա առավել կարևոր հմտությունները:

Չարկ է նշել, որ հարցվածներից ոմանք կարծում են, որ վստահության նման պակաս և թերահավատ մոտեցում է նկատվում նաև ինչպես մի շարք դատավորների, այնպես էլ իրենց գործընկեր այլ հաշտարարների և փաստաբանների շրջանում: Թեև շատերը ակնատես չեն եղել հաշտարարության արդյունավետությանը կամ անարդյունավետությանը, այդուհանդերձ, ունեն նախատրամադրվածություն դրա նկատմամբ: Իսկ եթե համա-

կարգն իր ներսում վստահություն չունի որոշակի ինստիտուտի նկատմամբ, շատ դժվար է այդպիսի վստահություն պահանջել ԶԶ միջին վիճակագրական քաղաքացիներից:

Որպես կանոն՝ անձը կարող է վստահել նրան, ինչի մասին նախ տեղյակ է և ինչի արդյունավետությունն ու անհրաժեշտությունը ուրիշի օրինակով տեսել կամ լսել է: Այստեղ մեծ կարևորություն կարող է ստանալ դիդակտիկ նյութերի տեսքով «հաջողության պատմությունների» (success story) ներկայացումը հասարակությանը և դրանց օրինակով հաշտարարության առավելությունները հասարակությանը հասցնելը, ինչի մասին առավել մանրամասն կներկայացվի ստորև:

### *Դատական աջակցության պակաս*

Ինչպես արդեն նշվեց, ներկայումս ԶԶ-ում իրականացվող հաշտարարության դեպքերի մեծ մասն իրականացվում է դատարանների կողմից նշանակված հաշտարարության միջոցով: Արդյունքում դատարանների դերը անչափ կարևոր է ԶԶ-ում հաշտարարության զարգացման գործընթացում: Հատկանշական է, որ հաշտարարության զարգացումն ու համատարած օգտագործումը նախ և առաջ բխում են հենց դատարանների շահերից, քանի որ այն հնարավորություն է տալիս թեթևացնելու դատարանների ծանրաբեռնվածությունը և կրճատելու գործերի քանակը: Այն նաև հիանալի հնարավորություն կլինի մանր և ոչ բարդ գործերի վրա կենտրոնանալու փոխարեն դատավարական ողջ ներուժը ուղղելու առավել բարդ վեճերի արդյունավետ լուծմանը: Այդուհանդերձ, հարցվածներից շատերը նշում էին, որ դատարանները բավականաչափ չեն համագործակցում հաշտարարների հետ և չեն աջակցում ինստիտուտի կայացմանը՝ որոշ դեպքերում այն պայմանավորելով անգամ դատարանների կողմից «մրցակցելու» միտումով: Այսինքն՝ վստահության ու իրազեկվածության պակասը հանգեցնում է նրան, որ դատարաններն ու հաշտարարները միմյանց փոխլրացնելու գործառույթ չեն կատարում:

Հարցվածներից շատերը որպես դատարանների կողմից աջակցության պակասի վառ դրսևորում նշում էին հաշտարարության մասին դատավարության կողմերին ոչ հստակ և ամփոփ տեղեկատվություն տրամադրելը և ակնհայտ հաշտարարության համար պարարտ հող լինելու դեպքում հաշտարարություն չնշանակելը: Այս մասով վերը արդեն իսկ ներկայացվել են առաջարկներ հաշտարարության նշանակման լրացուցիչ կարգավորման, ինչպես նաև պարտադիր հաշտարարության ու հաշտարարի հետ պարտադիր տեղեկատվական հանդիպման մասին:

Ամեն դեպքում, ի լրումն օրենսդրական փոփոխությունների, անհրաժեշտ է աշխատանք տանել դատավորների հետ (վերապատրաստումների, կլոր սեղանների և նման այլ գործիքների կիրառմամբ)՝ վերջիններիս ներկայացնելու համար տեղեկություններ, նյութեր ու գործիքներ՝ կողմերին հաշտարարության էությունն ու դրա առավելությունները առավել բազմակողմանիորեն ներկայացնելու համար:

Բացի դրանից՝ հաշտարարներից շատերը նաև փաստաբան են և սեփական փորձի հիման վրա նշում են, որ ներկայումս ՀՀ-ում շատ քիչ են դատավորները, որոնք իրականացնում են գործի օբյեկտիվ գնահատում և անհրաժեշտության դեպքում նշանակում պարտադիր հաշտարարություն: Այս առումով կարևոր է նշել հաշտարարների առաջին փուլի որակավորման ժամանակ Ավան և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում իրականացված պիլոտային ծրագրի մասին, որի ժամանակ հաշտարարները դատարանի շենքում են եղել, և գործն անմիջապես հանձնվել է հաշտարարության: Այս ընթացքում շուրջ 10-12 գործ անմիջապես ավարտվել է հաշտությամբ: Նման մոտեցումը գրեթե իսպառ վերացնում է լոգիստիկ բոլոր խնդիրները, որոնք կապված են հաշտարարի նշանակման, գործի նյութերը նրան հանձնելու, վեճի կողմերի և հաշտարարի միջև կապ հաստատելու կամ հաշտարարությունն իրականացնելու համար այլ վայր մեկնելու անհրաժեշտության հետ:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է երկարաժամկետ աշխատանք իրականացնել դատարանների հետ, որպեսզի վերջիններս առավել ներգրավված լինեն հաշտարարության զարգացման գործում: Այս խնդրի լուծման առավել թիրախային առաջարկներ ներկայացված են ստորև:

### *Այլ խնդիրներ*

Ներկայումս Հաշտարարների ԻԿԿ-ն չունի ֆինանսավորման բավարար մեխանիզմ և չի կարողանում իրականացնել իր անդամների տարեկան վերապատրաստումը, ապահովել նրանց հաշտարարություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններով (վայրով): Քանի դեռ հաշտարարությունը չի զարգացել, չի կարելի ակնկալել, որ հաշտարարները միշտ հնարավորություն կունենան իրենց հաշվին ապահովելու գրասենյակային պայմաններ հաշտարարություն իրականացնելու համար: Այս առումով հարկ է նշել որոշ երկրների փորձը, որտեղ դատարաններն ունեն հաշտարարության համար հարմարավետ տարածքներ:

Առանձին խնդիր է առաջացնում «հաշտարարություն» եզրույթի կիրառումը, քանի որ բնակչության շրջանում հաճախ այն շփոթում են «ֆինանսական համակարգի հաշտարարի» հետ: Ֆինանսական համակարգի հաշտարարը վեճը լուծող և որոշում կայացնող մարմին է՝ ի տարբերություն արտոնագրված հաշտարարի, որը վեճը կողմերի փոխարեն լուծելու կամ որոշում կայացնելու իրավունք չունի: Շատերի կարծիքով իրազեկումը այս խնդիրը չի լուծի, և անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում որևէ կերպ անդրադառնալ այս հարցին և կարգավորել այն:

Սակայն հեղինակները օրենսդրական լուծումը այս պարագայում այդքան էլ տեղին չեն համարում, քանի որ ֆինանսական համակարգի հաշտարարի վերանվանումը այդքան էլ իրատեսական չէ (այն փաստացի վաղուց կայացած, արդյունավետ գործող ու բավականին ճանաչված կառույց է), իսկ հաշտարար-

րության համար հնարավոր այլ տերմինը՝ «մեդիացիան», ևս չփոթմունքի առիթ կարող է տալ:

## **2.2.2. Իրազեկվածության մեծացմանը, վստահության բարձրացմանն ու հաշտարարության զարգացմանն ուղղված առաջարկներ**

Կատարված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ-ում հաշտարարության զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել համակարգված գործողությունների շարք (ինչպես պետական մարմինների, այնպես էլ հաշտարարների և ոլորտի այլ մասնագետների կողմից): Հաշվի առնելով հաշտարարության զարգացմանը խոչընդոտող հիմնական մարտահրավերները՝ հեղինակները համոզված են (ինչին նաև համակարծիք է հարցվածների մեծամասնությունը), որ հաշտարարության մասին տեղեկատվության տարածման առաջնային օղակը պետք է լինեն դատարանները, իրավաբաններն ու փաստաբանները:

Բացի դրանից՝ հաշտարարության «սպառողների» շրջանակը առավել լայն է (ի համեմատ արբիտրաժի), և հետևաբար իրազեկման աշխատանքներ անհրաժեշտ է տանել նաև փաստացի վեճ ունեցող բոլոր անձանց շրջանում: Նման թիրախավորումն ավելի արդյունավետ է, քան ընդհանուր բնակչության շրջանում իրազեկման միջոցառումների իրականացումը, քանի որ սովյալ պահին վեճ չունեցող անձը, ամենայն հավանականությամբ, մեծ ուշադրություն չի դարձնի իրազեկման միջոցառումներին: Իսկ վեճ ունեցող անձը կարող է իրականում հետաքրքրված լինել իր վեճը լուծելու առավել արագ, արդյունավետ և նվազագույն ծախսերով:

Սակայն հարկ է հաշվի առնել, որ հաշտարարության մասին իրազեկման արշավները պետք է կազմակերպել միայն վերապատրաստված և հասանելի հաշտարարների առկայության



պարագայում, քանզի հակառակ դեպքում մասնակիցների ներգրավման և պատշաճ որակով հաշտարարություն չիրականացնելու պայմաններում իրազեկումը հաշտարարության համակարգի զարգացման համար կարող է առավելապես բացասական հետևանք ունենալ: Յետևաբար հաշտարարության ինստիտուտի զարգացման համար անհրաժեշտ է որդեգրել զարգացման փուլային մոդելը, որի պարագայում առաջին հերթին կիրականացվեն հաշտարարների մասնագիտացում և վերապատրաստում, այն է՝ կապահովվեն հաշտարարության իրականացման պատշաճ որակ և մակարդակ, և երկրորդ փուլով կիրականացվի հանրության իրազեկվածության բարձրացում՝ ապահովելով պահանջարկ արդեն իսկ ձևավորված կառույցի համար:

Ամփոփելով հարցվածների առաջարկած և հեղինակների համայնած առաջարկների շարքը՝ հեղինակները ներկայացնում են հետևյալ առաջարկությունները.


- **Նախքան իրազեկման արշավների կազմակերպումը իրականացնել ՅՅ-ում հաշտարարության իրականացման հնարավորության գնահատում (capacity assessment), որը կարելի է իրականացնել ներկայումս արտոնագրված հաշտարարների գիտելիքի և մասնագիտական պատրաստվածության գնահատման միջոցով, ինչպես նաև ուսումնասիրել, թե որքանով են նրանք դեռևս հետաքրքրված իրականացնելու հաշտարարի գործունեություն (կազմելով համապատասխան ցանկ՝ մասնագիտացվածությամբ):**
- **Իրականացնել հաշտարարության ենթակա պոտենցիալ վեճերի տեսակների նախնական գնահատում:** Մասնավորապես անհրաժեշտ է հասկանալ, թե որ տեսակի վեճերով է առավել հավանական, որ կողմերը հակված կլինեն դիմելու հաշտարարի և վեճը լուծելու հաշտարարության միջոցով:

- Ընդհանուր բնակչության շրջանում իրազեկվածության միջոցառումների իրականացում:**  
 Միջոցառումները պետք է ներառեն առցանց կյուրթերի տեղադրում ու պարբերական թարմացում (ցանկալի է Հաշտարարների ԻԿԿ-ի կայքի ստեղծման միջոցով), սոցիալական ցանցերի միջոցով տեղեկությունների տարածում (որոնք հասանելի կլինեն ինչպես ընդհանուր բնակչությանը, այնպես էլ կոնկրետ վեճի կողմերին), տպագիր կյուրթերի տարածում (որպես կանոն՝ դատարաններում ու փաստաբանական գրասենյակներում՝ վեճի կողմերին ու հաճախորդներին դրանց հասանելիությունը ապահովելու համար), ինչպես նաև ուսուցողական կյուրթերի ցուցադրում հեռուստատեսությամբ (նախկինում նման կյուրթ նկարահանվել և որոշ ժամանակ շրջանառվել է Հանրային հեռուստատեսությամբ): Հատկապես առցանց ռեսուրսների օգտագործմամբ անհրաժեշտ է տեղադրել պարզ և դիդակտիկ, ուսուցողական տեսալսողական կյուրթեր, «հաջողության պատմություններ» (success stories) կամ նախկինում հաշտարարությունից օգտված անձանց վկայություններ (testimonials): Իրազեկումը պետք է նաև իրականացվի՝ հաշվի առնելով մասնագիտացված հաշտարարների առկայությունը:
- Իրազեկման միջոցառումների, վերապատրաստումների և սեմինարների իրականացում դատավորների ու փաստաբանների շրջանում, հատկապես միջազգային փորձագետների ներգրավմամբ:** Այս միջոցառումները կարող են ներառել սեմինարներ, կլոր սեղան քննարկումներ, վերապատրաստումներ:
- Հաշտարարությանը նվիրված կրթական ծրագրերի և/կամ դասընթացների ներդրում/կազմակերպում բուհերում (հավանաբար արբիտրաժի հետ՝ ՎԱԸ նվիրված դասընթացի շրջանակում):**


- Աշխատանք դատավորների հետ (վերապատրաստումների, կլոր սեղանների, բարձրագույն դատական խորհրդի կողմից շրջաբերականների և նման այլ գործիքների կիրառմամբ)՝ քաջալերելով նրանց առավել ակտիվ ուղղորդել վեճի կողմերին դեպի հաշտարարություն ու պարզաբանել կողմերին դրա էությունը:
- Դիտարկել հաշտարարության իրականացման համար դատարանների շենքերում կամ դրանց կից տարածքի հատկացման կամ Հաշտարարների ԻԿԿ-ին համապատասխան շենքային պայմաններով ապահովելու հնարավորությունը:
- Մինչ Հաշտարարների ինքնակառավարվող կազմակերպության կողմից երկարաժամկետ ֆինանսական կայունության հասնելը նրան աջակցության ցուցաբերում շենքային պայմանների ապահովման ու ընթացիկ վարչական ծախսերի մասով:




ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ  
ԱՄՓՈՓՈՒՄ



Այսպիսով՝ իրականացված հետազոտության հիման վրա հեղինակները ներկայացնում են մի շարք առաջարկներ արբիտրաժի և հաշտարարության զարգացմանն ուղղված օրենսդրական ու կազմակերպական բարեփոխումների և գործնական քայլերի (այդ թվում՝ իրազեկման միջոցառումների) վերաբերյալ: Այս առումով կարևոր է նշել, որ յուրաքանչյուր դեպքում օրենսդրական ու կազմակերպական բարեփոխումները, իրազեկման միջոցառումներն ու այլ գործնական քայլերը պետք է իրականացվեն զուգահեռ՝ պատշաճ արդյունք ապահովելու համար: Ստորև ամփոփում ենք համապատասխան առաջարկությունները:



ԱՐԲԻՏՐԱԺ

- 
- Օրենսդրական մակարդակով հստակ ամրագրել, որ արբիտրաժային համաձայնության առկայության պարագայում գործարքի անվավերության հարցը, ի թիվս այլոց, կարող է քննել նաև արբիտրաժային տրիբունալը:
  - Դիտարկել կորպորատիվ վեճերը արբիտրաժի միջոցով լուծելու հնարավորությունը (Արբիտրաժի մասին օրենքում «առևտրային» եզրույթի ներքո դրանք ներառելու) (բացառությամբ այն վեճերի, որոնցով պահանջի առարկա են իրավաբանական անձի վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ կորպորատիվ որոշումների ընդունումը կամ վիճարկումը)՝ հաշվի առնելով նաև այդ մասով առաջադեմ իրավակարգերում առկա միտումները:
  - Օրենսդրորեն սահմանել գործող արբիտրաժային հաստատություններում և *ad hoc* արբիտրաժի դեպքում շահերի բախման կանոնակարգերի ներդրման պահանջ՝ դրանց բովանդակության մասով որպես լավագույն փորձ հիմք ընդունելով Փաստաբանների միջազգային ասոցիացիայի շահերի բախման վերաբերյալ ուղեցույցը (IBA Guidelines on Conflict of Interest):

- Արբիտրաժի մասին օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետում «անգործունակ» բառից հետո լրացնել «կամ չի ունեցել արբիտրաժային համաձայնությունը կնքելու իրավասություն» բառերը:
- Արբիտրաժի մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «առոչինչ» եզրույթը նշված հոդվածում փոխարինել «անվավեր» եզրույթով:
- Աշխատանք տանել դատավորների հետ (վերապատրաստումների, կլոր սեղանների և նման այլ գործիքների կիրառմամբ), որպեսզի վերջիններս առավել նեղ մեկնաբանմամբ կիրառեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ ու 4-րդ մասերով իրենց վերապահված լիազորությունները՝ խուսափելով դիմումի քննության շրջանակում այնպիսի հարցերի ուսումնասիրությունից, որոնք դուրս են Արբիտրաժի մասին օրենքով սահմանված՝ արբիտրաժի վճիռը դատարանի կողմից չեղյալ ճանաչվելու հիմքերի շրջանակից:
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 323-րդ հոդվածի 6-րդ մասը վերաշարադրել՝ սահմանելով, որ վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը պետք է քննվի նույն վարույթի շրջանակում, ինչ որ կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումը, և երկու դիմումների վերաբերյալ կայացվում է մեկ ընդհանուր որոշում (նաև հստակեցնելով, թե որ դատարանի վարույթում են միացվում գործերը):
- Բուհերում ընդլայնել արբիտրաժի դասավանդումը (այս պահին ոչ բոլոր բուհերում է դասավանդվում արբիտրաժ):
- Ապահովել ուսանողների շրջանում դրա ակտիվ քարոզն ու տարածումը, առավել հաճախ կազմակերպել արբիտրաժին նվիրված դատախաղեր:




- Գործող արբիտրների և փաստաբանների համար իրականացնել մասնագիտական վերապատրաստումներ, պատրաստել կրթական նյութեր և տարածել դրանք (հեղինակներն այս առումով հարկ են համարում ավելացնել աշխատանք դատավորների հետ՝ արբիտրաժի վերաբերյալ կառուցողական երկխոսության ձևավորման նպատակով):
- Մասնագիտական միջավայրում պարբերաբար ծավալել մասնագիտական քննարկումներ (այդ թվում՝ աշխատանքային խմբերի ձևաչափով) ՀՀ-ում արբիտրաժի զարգացման վերաբերյալ, հատկապես դատաիրավական բարեփոխումների համատեքստում:
- Մասնագետների շրջանում իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներից հետո նաև իրազեկվածության բարձրացման միջոցառումներ իրականացնել գործարարների շրջանում:
- Արբիտրաժային հաստատությունում ներգրավված արբիտրների մասին ստեղծել մանրամասն տվյալներով բազա (ներառյալ մանրամասն տեղեկություններ մասնագիտացումների ու փորձի մասին):
- Առավել ընդլայնել արբիտրների ցանկը՝ ներգրավելով ինչպես ներքին շուկայում առկա, այնպես էլ սփյուռքի՝ արբիտրաժի կամ առանձին երկրի իրավունքի ճանաչված մասնագետների (առաջին հերթին թիրախավորելով աշխարհում ու տարածաշրջանում առավել հաճախ կիրառվող իրավունքի երկրները (Անգլիա, Շվեյցարիա, Ռուսաստան, ԱՄՆ որոշ նահանգներ՝ Նյու Յորք, Կալիֆոռնիա, Դելավեր և այլն)):
- Հաստատել համագործակցություն հեղինակավոր միջազգային արբիտրաժային կենտրոնների հետ՝ փորձի փոխանակման, կայացման ուղղությամբ մասնագիտական

աջակցություն ստանալու համար (օրինակ՝ արբիտրների մենթորություն (mentoring)):

- Արբիտրաժային հաստատություններում ներդնել գործերի կառավարման համակարգեր (ներառյալ գործերի առցանց կառավարում, նիստերի հեռակա վարման մեխանիզմներ, հաստատության քարտուղարություն՝ հստակ լիազորություններով ու կարողություններով):
- Պետության հետ համագործակցությամբ (հնարավորության դեպքում՝ պետության աջակցությամբ) իրականացնել Հայաստանը որպես տարածաշրջանային արբիտրաժի վայրի գաղափարի առաջխաղացմանն (promote) ուղղված միջոցառումներ:



ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- 
- Հաշտարարության մասին օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ սահմանել հաշտարարների ծանրաբեռնվածության և մասնագիտացվածության հաշվառման կարգ, որը կապահովի ծանրաբեռնվածության հնարավորինս լիարժեք արձանագրումն ու համապատասխան տվյալների հասանելիությունը դատարանների համար, ինչպես նաև գործնականում ներդնել հաշտարարների ռեեստրի վարման առցանց հարթակ:
  - Հստակ ամրագրել դատարանի՝ հաշտարարությունը նշանակելու մասին որոշումը, կողմերի՝ դատարանի տրամադրության տակ եղած կոնտակտային տվյալները (ներառյալ, հնարավորության դեպքում, հեռախոսային համարները), ինչպես նաև հայցադիմումի և հայցադիմումի պատասխանի պատճենները հաշտարարին տրամադրելու պարտավորությունը:
  - Սահմանել, որ հաշտարարը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին:
  - Ամրագրել, որ կողմերը պարտավոր են հաշտարարությունը նշանակելու մասին որոշումը ստանալու պահից 10-օրյա

ժամկետում ներկայանալ հաշտարարի գրասենյակ կամ այլ կերպ՝ համաձայնեցված եղանակով, կապ հաստատել հաշտարարի հետ:


- Աշխատանք տանել դատավորների հետ (վերապատրաստումների, կլոր սեղանների և նման այլ գործիքների կիրառմամբ)՝ վերջիններիս ներկայացնելու համար հաշտարարության էությունը, դրա առավելությունները՝ քաջալերելով նրանց առավել ակտիվ ուղղորդել վեճի կողմերին դեպի հաշտարարություն, ու պարզաբանել կողմերին դրա էությունը, ինչպես նաև հաշտարարության իրականացման համար բավարար ժամանակ տրամադրելու անհրաժեշտությունը (օրենքով սահմանված եռամսյա ժամկետի սահմաններում):
- Ընդունել Հաշտարարության որակավորման հանձնաժողովի ձևավորման, գործունեության, որակավորումը շնորհելու և որակավորման վկայագիր տրամադրելու կարգ ու կազմակերպել հաշտարարների որակավորում:
- Հաշտարարների որակավորման քննությունում օրենսդրության իմացության վերաբերյալ հարցերի հետ մեկտեղ դիտարկել փորձնական գործեր (case-study), որոնք վերջիններս կլուծեն, և հաշտարարության սիմուլյացիաներ (mock mediation) ներառելու նպատակահարմարությունը:
- Օրենսդրորեն երաշխավորել հաշտարարների ավելի մեծ ներկայացվածությունն հաշտարարների որակավորման հանձնաժողովում:
- Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությանը միջնաժամկետ կտրվածքով աջակցություն ցուցաբերել վերապատրաստումների կազմակերպման հարցում, այդ թվում՝ միջազգային փորձ ունեցող մասնագետների ներգրավմամբ:

- Աջակցել (այդ թվում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ) հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությանը՝ մշակելու հաշտարարի վարքագծի կանոնների մանրամասներն ու հաշտարարության կանոնները:
- Մշակել (օրինակ՝ բարձրագույն դատական խորհրդի միջոցով) պարզ ու մատչելի լեզվով շարադրված տեղեկատվական թերթիկ կամ ուղեցույց հաշտարարության ու դրա առավելությունների վերաբերյալ և տարածել դատավորների շրջանում, որը դատավորները կօգտագործեն վեճի կողմերին հաշտարարության էությունը պարզաբանելու համար:
- Հաշտարարության մասին օրենքի 21-րդ հոդվածում կատարել լրացում, համաձայն որի՝ ընդհանուր ժողովի քվորումը որոշելիս անդամների թվի հաշվարկում հաշվի չեն առնվում այն անդամները, որոնք անհարգելի պատճառով (որի մասին նա պետք է գրավոր ծանուցի կազմակերպությանը ողջամիտ ժամկետում) չեն մասնակցել նախորդ երկու ընդհանուր ժողովի նիստերին:
- Հաշտարարության մասին օրենքի 16-րդ հոդվածում կատարել լրացում, համաձայն որի՝ հաշտարարները կարող են կասեցնել իրենց կարգավիճակը սեփական դիմումով:
- Հրաժարվել անվճար 4 ժամ հաշտարարությունից՝ փոխարենը սահմանելով հաշտարարի հետ պարտադիր անվճար տեղեկատվական հանդիպման պահանջ բոլոր այն դեպքերում, եթե առկա է ողջամիտ հավանականություն վեճը հաշտությամբ ավարտելու:
- Հաշտարարության զարգացումն իրականացնել փուլային եղանակով՝ առաջին հերթին ապահովելով հաշտարարների մասնագիտացվածության և վերապատրաստման պատշաճ մակարդակ, որից հետո իրականացնել իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

- Իրականացնել կարողությունների ու հնարավորությունների գնահատում հաշտարարների մասնագիտացվածության և հետաքրքրվածության նախնական գնահատման միջոցով:
- Հաշտարարության համակարգի զարգացումից հետո դիտարկել մինչև 1 ամիս ժամկետով պարտադիր հաշտարարության պահանջ (որպես դատարան դիմելու նախապայման) ընտանեկան վեճերով (բացառությամբ ավիմենտների բռնազանձման պահանջների):
- Ընդհանուր բնակչության շրջանում իրականացնել իրազեկվածության միջոցառումներ (առցանց կյուբերի տեղադրում ու պարբերական թարմացում, սոցիալական ցանցերի միջոցով տեղեկությունների տարածում, տպագիր կյուբերի տարածում, ինչպես նաև ուսուցողական կյուբերի ցուցադրում հեռուստատեսությամբ (ժամանակին նման կյուբ նկարահանվել և որոշ ժամանակ շրջանառվել Է Հանրային հեռուստատեսությամբ), ներառյալ պարզ և դիդակտիկ, ուսուցողական տեսալսողական կյուբեր, «հաջողության պատմություններ» (success stories) և/կամ նախկինում հաշտարարությունից օգտված անձանց վկայություններ (testimonials)):
- Իրականացնել իրազեկման միջոցառումներ, վերապատրաստումներ ու սեմինարներ փաստաբանների շրջանում, հատկապես միջազգային փորձագետների ներգրավմամբ: Այս միջոցառումները կարող են ներառել սեմինարներ, կլոր սեղան քննարկումներ, վերապատրաստումներ:
- Բուհերում ներդնել/կազմակերպել հաշտարարությանը նվիրված կրթական ծրագրեր և/կամ դասընթացներ (հավանաբար արբիտրաժի հետ՝ ՎԱԼ նվիրված դասընթացի շրջանակում):

- Դիտարկել հաշտարարության իրականացման համար դատարանների շենքերում կամ դրանց կից տարածքի հատկացման կամ Հաշտարարների ԻԿԿ-ին համապատասխան շենքային պայմաններով ապահովելու հնարավորությունը:
- Մինչ Հաշտարարների ինքնակառավարվող կազմակերպության կողմից երկարաժամկետ ֆինանսական կայունության հասնելը նրան աջակցության ցուցաբերում շենքային պայմանների ապահովման ու ընթացիկ վարչական ծախսերի առումով:






ՀԱՎԵԼՎԱՑ 1

<b>Ընդհանուր տեղեկություններ</b>			
1	Կազմակերպության անվանումը		
2	Գործունեության ոլորտ		
3	Ներկայացուցչի անուն, ազգանուն, պաշտոն		
4	Կոնտակտային տվյալներ		
5	Կազմակերպության կայքէջ և սոցիալական կայք		
6	Որքա՞ն հաճախ եք խորհուրդ տալիս վեճի կողմերին իրականացնելու վեճերի այլընտրանքային լուծում (ՎԱԼ):	<input type="checkbox"/> երբեք	<input type="checkbox"/> տարեկան մի քանի անգամ
		<input type="checkbox"/> ամսական մի քանի անգամ	<input type="checkbox"/> ավելի հաճախ
6.1	Ո՞ր իրավիճակներում կառաջարկեիք արբիտրաժը Հայաստանում:		
6.2	Արդյոք տեղա՞կ եք Հայաստանում արբիտրաժում «հաջողության պատմություններ»-ից:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ

7	<p>Եթե ձեր հաճախորդին առաջարկում եք արբիտրաժի դիմել, ի՞նչ նկատառումներ կարող են ազդել արբիտրաժի նստավայրի և արբիտրաժային հաստատության ընտրության վրա:</p>		
8	<p>Երբևէ օգտագործե՞լ եք Հայաստանում արբիտրաժային հաստատություններ:</p>	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
8.1	<p>Եթե այո, ապա ինչպիսի՞ն է ձեր գնահատականը:</p>		
8.2	<p>Եթե ոչ, ապա ինչու՞:</p>		
9	<p>Կարիք կա՞ Հայաստանում նոր արբիտրաժային հաստատության ստեղծման:</p>	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
9.1	<p>Ինչու՞ ԱՅՈ/ՈՉ:</p>		
10	<p>Դուք երբևէ նշանակե՞լ եք հայաստանյան արբիտր/ հաշտարար:</p>	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
10.1	<p>Եթե այո, ապա ի՞նչ նկատառումով եք նման ընտրություն կատարել:</p>		

10.2	Որտեղի՞ց եք ստացել տեղեկատվություն հայ արբիտրների/հաշտարարների մասին:		
10.3	Եթե նախկինում օգտվել եք օտարերկրյա արբիտրներից, որտեղի՞ց եք տեղեկացել դրանց մասին:		
11	Կա՞ն տնտեսության հատուկ ճյուղեր, որոնք հատկապես հակված են վեճերի այլընտրանքային լուծման/ արբիտրաժի կիրառմանը:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
11.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		
12	Հաշտարարության վերաբերյալ համաձայնություններ ներառու՞մ եք վեճերի լուծման մասին պայմանագրային դրույթներում:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
13	Ո՞ր հաճախորդներն են համաձայն արբիտրաժի/հաշտարարության դրույթներին:		
14	Ո՞ր դեպքերն են առավել հարմար արբիտրաժի/հաշտարարության կիրառման համար:		
15	Ձեր կարծիքով ի՞նչ կարող է արվել Հայաստանում արբիտրաժը/ հաշտարարությունը խթանելու համար:		



ՀԱՎԵԼՎԱՆՑ 2

<b>Ընդհանուր տեղեկություններ</b>			
1	Կազմակերպության անվանումը		
2	Գործունեության ոլորտ		
3	Ներկայացուցչի անուն, ազգանուն, պաշտոն		
4	Կոնտակտային տվյալներ		
5	Կազմակերպության կայքէջ և սոցիալական կայք		
<b>Օրենսդրական խնդիրներ</b>			
6	Առկա՞ են օրենսդրական խնդիրներ ՎԱԼ բնագավառում:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
6.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		
7	Առկա՞ են օրենսդրական խնդիրներ արբիտրաժային/ մեդիացիոն համաձայնությունների կնքման իրավակարգավորումներում:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
7.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		
8	Առկա՞ են ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների համապատասխանեցման հետ կապված խնդիրներ:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ

8.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		
9	Առկա՞ են արբիտրաժի քննությանը հանձնման ենթակա վեճերի շրջանակի իրավական կարգավորման վերաբերյալ խնդիրներ:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
9.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		
10	Առկա՞ են հայցի ապահովման միջոցների և նախնական կարգադրությունների օրենսդրական կարգավորման հետ կապված հարցեր:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
10.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		
11	Առկա՞ են խնդիրներ արբիտրաժային տրիբունալի վճռի վիճարկման կարգավորումներում:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
11.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		
12	Առկա՞ են խնդիրներ արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչման և կատարման կարգավորումներում:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
12.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		

13	Առկա՞ են խնդիրներ օտարերկրյա արբիտրաժի որոշումների/վճիռների ճանաչման և կատարման կարգավորումներում:	<input type="checkbox"/> ԱՅՈ	<input type="checkbox"/> ՈՉ
13.1	Եթե այո, ապա որո՞նք են դրանք:		
<b>Իրազեկվածության խնդիրներ</b>			
14	Տեսնո՞ւմ եք արդյոք վեճերի այլընտրանքային լուծման վերաբերյալ իրազեկվածության խնդիրներ, որո՞նք են դրանք:		
15	Որքա՞ն հաճախ եք խորհուրդ տալիս վեճի կողմերին ՎԱԼ իրականացնել:	<input type="checkbox"/> երբեք	<input type="checkbox"/> տարեկան մի քանի անգամ
		<input type="checkbox"/> ամսական մի քանի անգամ	<input type="checkbox"/> ավելի հաճախ
16	Վեճի կողմերը արդյոք հասկանու՞մ են մեդիացիայի և/կամ արբիտրաժի էությունը:	<input type="checkbox"/> այո, լավ	<input type="checkbox"/> այո, թերի
		<input type="checkbox"/> այո, շատ թերի	<input type="checkbox"/> ոչ
16.1	Հատկապես ո՞ր հարցերի առումով են նրանք թերի տեղեկացված:		
17	Ինչպե՞ս եք տեղեկատվություն տարածում ՎԱԼ մեխանիզմների և դրանց հասանելիության վերաբերյալ:		
18	Ի՞նչ խնդիրներ եք տեսնում ՎԱԼ մեխանիզմների նկատմամբ վստահության հարցում:		



19	Ի՞նչ քայլեր են անհրաժեշտ ՎԱԼ մեխանիզմների նկատմամբ վստահության բարձրացման համար:		
<b>Արբիտրների/հաշտարարների որակավորում և ընտրություն</b>			
20	Երբևէ իրականացրե՞լ եք հաշտարարություն: Ի՞նչ հաճախականությամբ եք գործեր ստանում:	<input type="checkbox"/> երբեք	<input type="checkbox"/> տարեկան մի քանի անգամ
		<input type="checkbox"/> ամսական մի քանի անգամ	<input type="checkbox"/> ավելի հաճախ
20.1	Եթե այո, ապա ի՞նչ հաճախականությամբ:		
21	Երբևէ եղե՞լ եք արբիտր:	<input type="checkbox"/> երբեք	<input type="checkbox"/> տարեկան մի քանի անգամ
		<input type="checkbox"/> ամսական մի քանի անգամ	<input type="checkbox"/> ավելի հաճախ
21.1	Եթե այո, ապա ի՞նչ հաճախականությամբ		
22	Ի՞նչ խնդիրներ եք տեսնում հաշտարարների որակավորման հարցում:		
23	Ի՞նչ քայլեր են անհրաժեշտ հաշտարարների որակավորման բարձրացման համար:		
24	Ի՞նչ խնդիրներ եք տեսնում հաշտարարների/արբիտրների ընտրության հարցում:		

<b>Ինստիտուցիոնալ համակարգ</b>		
25	Ի՞նչ կարծիքի եք հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության ստեղծման կամ գործունեության մասին:	
26	Ի՞նչ կարծիքի եք մշտապես գործող արբիտրաժային հաստատությունների մասին:	
27	Ի՞նչ քայլեր են անհրաժեշտ ՀՀ-ում միջազգայնորեն ճանաչված արբիտրաժային հաստատություն ձևավորելու համար:	
<b>Գործնական խնդիրներ</b>		
28	Ի՞նչ կարծիքի եք արբիտրների/ հաշտարարների կողմից հաշտարարության/գործերի քննության ժամկետների մասին:	Արբ.
		Հաշտ.
29	Ի՞նչ կարծիքի եք դատարանների կողմից արբիտրաժի հետ կապված գործերի քննության ժամկետների մասին:	
30	Ի՞նչ գործնական խնդիրներ եք տեսնում արբիտրների/ հաշտարարների գործունեության բնագավառում:	Արբ.
		Հաշտ.

## ABSTRACT

The analysis of the RA legislation allows us to conclude that the legislative field in the field of arbitration is in accordance with the international agreements of the Republic of Armenia and is largely in line with the best international experience in this field.

Most of the surveyed specialists are of the opinion that the problems related to the development of arbitration in Armenia arise not so much from the legislative as from practical problems.

It appears that the most significant issue concerns the approach taken by the RA courts in challenging the validity of arbitration agreements, namely that the examination of claims to declare an agreement invalid is exclusively under the court's jurisdiction.

The lack of mechanisms, criteria and guidelines for revealing the conflict of interests of arbitrators is a big problem in Armenia. Although, according to the law, each institution must have its own rules of conduct for arbitrators, in a small market like Armenia, where there is a high probability that the arbitrator examining the case and the party's representative will have a conflict of interest, more stringent and legislative solutions are needed.

It is necessary to work with judges (using trainings, round table discussions and other similar tools), so that they will avoid, within the scope of the application review, to examine the issues which are outside the scope of the Court's grounds for annulment of the arbitration award according to the Arbitration Law.

Regulation of the mediation process in Armenia is governed by the 2018 RA Law on "Mediation" and the RA Civil Procedure Code of the same year. Although both legal acts contain important

provisions, there are a number of significant legal and practical issues in the field of mediation which can be a significant obstacle to the development of the institute of mediation in Armenia.

The legislation does not clearly regulate the issues related to the compulsory execution of the agreement concluded as a result of mediation.

The register of licensed mediators is posted on the website of the Ministry of Justice, but the procedure for registering their workload and specialization has not been established yet. There are no clear procedures for how a judge selects and appoints a mediator.

The self-regulatory organization of mediators needs support in organizing trainings, including the involvement of specialists with international experience.

## ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արբիտրաժի ոլորտում օրենսդրական դաշտը համապատասխանեցված է ՀՀ միջազգային պայմանագրերին ու հիմնականում համահունչ է այս ոլորտում միջազգային լավագույն փորձին: Հայաստանում արբիտրաժի զարգացման հետ կապված խնդիրները պայմանավորված են ոչ այնքան օրենսդրական, որքան գործնական խնդիրներով:

Թերևս առավել էական խնդիրը վերաբերում է արբիտրաժային համաձայնություն պարունակող պայմանագրերի վավերության վիճարկման հարցում ՀՀ դատարանների որդեգրած մոտեցմանը, ըստ որի՝ գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջների քննությունը վերապահված է բացառապես դատարանին:

Հայաստանում մեծ խնդիր է արբիտրների շահերի բախման բացահայտման մեխանիզմների, չափանիշների և ուղեցույցների բացակայությունը: Թեև, օրենքի համաձայն, յուրաքանչյուր հաստատություն պետք է ունենա արբիտրների վարքագծի իր կանոնները, այդուհանդերձ, ՀՀ-ի նման փոքր շուկայում, որտեղ մեծ է հավանականությունը, որ գործը քննող արբիտրը և կողմի ներկայացուցիչը կունենան շահերի բախում, անհրաժեշտ են ավելի խիստ և օրենսդրական մակարդակի լուծումներ:

Անհրաժեշտ է աշխատանք տանել դատավորների հետ (վերապատրաստումների, կլոր սեղանների և նման այլ գործիքների կիրառմամբ), որպեսզի վերջիններս խուսափեն դիմումի քննության շրջանակում այնպիսի հարցերի ուսումնասիրությունից, որոնք դուրս են Արբիտրաժի մասին օրենքով սահմանված՝ արբիտրաժի վճռի՝ դատարանի կողմից չեղյալ ճանաչվելու հիմքերի շրջանակից:

Հաշտարարության գործընթացի կարգավորումը ՀՀ-ում իրականացվում է 2018 թ. ընդունված «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով և նույն թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Թեև երկու իրավական ակտերն էլ պարունակում են կարևոր կարգավորումներ, այդուհանդերձ, հաշտարարության ոլորտում առկա են օրենսդրական ու իրավակիրառ պրակտիկայի մի շարք էական խնդիրներ, որոնք կարող են զգալի խոչընդոտ լինել Հայաստանում հաշտարարության ինստիտուտի զարգացման համար:

Օրենսդրությունը բավականաչափ հստակ չի կարգավորում հաշտարարության արդյունքում կնքված համաձայնության հարկադիր կատարման հետ կապված խնդիրները:

Արտոնագրված հաշտարարների ռեեստրը տեղադրված է արդարադատության նախարարության կայքում, սակայն նրանց ծանրաբեռնվածության և մասնագիտացվածության հաշվառման կարգ մինչ օրս սահմանված չէ: Չկան հստակ ընթացակարգեր, թե դատավորն ինչպես է ընտրում և նշանակում հաշտարարին:

Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությանը անհրաժեշտ է աջակցություն վերապատրաստումների կազմակերպման հարցում, այդ թվում՝ միջազգային փորձ ունեցող մասնագետների ներգրավմամբ:

## «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո պատրաստված այլ հրապարակումներ

- Պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում, Մաս 1, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA>
- Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia>
- Հարաբերություններ առանց շփումների, 2020, <https://epfarmenia.am/hy/document/Relations-without-Interactions>
- Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը (անգլերեն), 2020, <https://epfarmenia.am/hy/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
- Հայաստանը և տարածաշրջանը, 2019, <https://epfarmenia.am/hy/document/Armenia-and-the-Region>
- Հրատարակչական գործընթացի ուղեցույց, 2019, <https://epfarmenia.am/hy/document/publication-algorithm>
- Այժմեական գիտելիք շահերի արդյունավետ պաշտպանության համար, ձեռնարկ, 2019, <https://epfarmenia.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
- Զննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հռետորաբանական շեղող կիրառումներ, 2019, <https://epfarmenia.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
- Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, 2018, <https://epfarmenia.am/hy/document/MSTA-Creative-Game>
- Հասարակություն և տեղական ինքնակառավարում. Կազմակերպագործունեական խաղի արդյունքները, 2018, <https://epfarmenia.am/hy/document/OAS-Highlights-CELoG-2018>
- ԵՀՀ-ն և մշակույթը, գրականությունն ու արվեստը (անգլերեն), 2018, <https://epfarmenia.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, 2017, <https://epfarmenia.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>

## Publications under the “EPF University” headline

- The Probation Service in the Republic of Armenia. Part 1 (in Armenian). (2020)  
<https://epfarmeria.am/hy/document/Baseline-research-on-probation-service-in-RA>
- Issues Related to the Rights of and Opportunities for Yezidi Girls Residing in Armenia. (2020)  
<https://epfarmeria.am/document/Issues-Related-to-the-Rights-of-and-Opportunities-for-Yezidi-Girls-Residing-in-Armenia>
- Relations Without Interactions. (2020)  
<https://epfarmeria.am/document/Relations-without-Interactions>
- Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. (2020)  
<https://epfarmeria.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>
- Armenia and The Region (in Armenian). (2019)  
<https://epfarmeria.am/hy/document/Armenia-and-the-Region>
- Publishing Guide (in Armenian, with English abstracts). (2019)  
<https://epfarmeria.am/hy/document/publication-algorithm>
- Present-day knowledge for effective advocacy (in Armenian, with English abstracts). (2019)  
<https://epfarmeria.am/hy/document/Manual-for-CSOs-Bridge4CSOs>
- Critical Thinking: Logical Fallacies and Misleading Rhetorical Tricks (in Armenian). (2019)  
<https://epfarmeria.am/hy/document/Logical-Fallacies-and-Misleading-Rhetorical-Tricks-Critical-Thinking>
- About the Methodology of Systemic Thought Activity (MSTA) and Creative Games. (2018)  
<https://epfarmeria.am/document/MSTA-Creative-Game>
- Society and Local Self-Governance. Conclusions and Recommendations from Organizational Activity Seminar. (2018)  
<https://epfarmeria.am/document/OAS-Highlights-CELoG-2018>
- Culture, Literature and Art. (2018)  
<https://epfarmeria.am/document/EPF-Culture-Literature-Art>
- Manifestations of Tolerance and Intolerance in Armenian Literature (in Armenian, with English abstracts). (2018)  
<https://epfarmeria.am/document/Manifestations-of-Tolerance-and-Intolerance-in-Armenian-Literature>





The study was conducted by Eurasia Partnership Foundation (EPF) in partnership with Helsinki Association for Human Rights (HAHR) and Human Rights Power (HRP) within the framework of the “Partnership for Justice Reform” project. The contents of this publication are the sole responsibility of EPF and can in no way be taken to reflect the views of Helsinki Association and Human Rights Power NGO.



Alternative dispute resolution in the Republic of Armenia  
Authors of the study: A. Khzmalyan, H. Malkhasyan, H. Movsesyan

Eurasia Partnership Foundation, 2020-106 pages



This publication is a part of the series of manuals published under the “EPF University” heading. This publication is a part of Civil Society (CS) direction. The series include texts which belong to four large thematic directions:

**Critical Thinking (CT)**

**War and Peace (WP)**

**Civil Society (CS)**

**Education, methodology of history, culture and values (EMHCV)**

